№ 171 ՈՒՐԲԱԹ, 6 ՕԳՈՍՏՈՍԻ 1910 ՈՒՐԲԱԹ, 6 ՕԳՈՍՏՈՍԻ № 171

ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 5 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակադրոշմով):

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и Ко" ֆիրմայի միջոցով Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ժողովրդական Լուսաւորութեան Մինիստրութեան իրաւասութեան Ներքոյ գտնվող

ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ТИФЛИСЪ. СУДЕБНАЯ, ПРОТИВЪ ОКРУЖН. СУДА, 33.

Օգոստոսից ընդունվում են երկսեռ երեխաներ— ԵՐԹԵՒԵԿ, ԿԻՍԵՐԹԵՒԵԿ և ԵՐԿՈՒ ԳԻՇԵՐՕԹԻԿ.

Դպրոցն անցեալ տարիների նման ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է ԵՐԵԽԱՆԵՐԻՆ աջող կերպով ԲՈԼՈՐ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մանրամասնութիւններն իմանալ դպրոցի շինութեան մէջ՝ կառավարչուհի ԽՍՊԱՆԴԱՐԵԱՆԻՑ (նա ինքը Սպանդարեան), պրոգիմնազիայի նախկին տեսչուհի, առաւօտ. ժամը 9—12-ը և երեկոյեան 5—6-ը:

(ու. կ.) 908. 2—1

ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԱՌԵՒՏՐԻ

Կովկասեան Ընկերութիւնը

յայտնում է ի գիտութիւն իր կլիէնտների, որ փոխանելու համար շարունակ ստանալով պահանջվող քանակութեամբ, ուղղակի ֆաբրիկայից, «ԲԵՐԿՖԵԼԴԻ» իսկական զտիչ՝ իր յատկութեամբ գերազանց այլ սիստեմների զտիչներից, այդ իսկ պատճառով Ընկերութիւնը տպագրել է տուել խոշոր քանակութեամբ

Наставленіе къ употребленію фильтровъ

„БЕРКФЕЛЬДА":

Բացի տեխնիկական ցուցմունքներից, թէ ինչպէս ամրացնել զտիչներ ջրի կրանների վրա և այլն, այդ «Ցուցումների» մէջ ցոյց են տրվում մաքրելու և կեղտոտ զտիչները անվնաս դարձնելու եղանակները, այն է՝ 1) Ցիլինդրը կեղտոտվելու ժամանակ, երբ դժուարին է դարձվում ջրի զտումը, հարկաւոր է ամսական մի քանի անգամ ցիլինդրը հանել զտիչ մեքենայից և՝ մաքրելով նրան ջրով—լիֆի կտորով կամ կօշտեայ վրձինով—նորից դնել իր տեղը. 2) Ցիլինդրը կատարելապէս մաքրելու համար հարկաւոր է նրան ամսական 1—2, անգամ. մի ժամ շարունակ. եռացնել ջրի մէջ, և կամ թէ մի ժամով ենթարկել նրան շոգեհարութեան: Այդ «Наставленіе» բրօշիւրները ներկայումս տրվում են ցանկացողներին ձրիաբար—Ընկերութեան գլխաւոր պահեստում, Եւանգուլօվսկայա փող., սեփ. տ., նոյնպէս և Ընկերութեան մանրածախ խանութներում՝ Երևանեան հրապար. և Միխայլօվսկի պրօսպ. վրա:

(սա.) 911. 1—1

ԳՈՆԷ ԱՅԺՄ

Ո՞վ կարող էր կարծել, թէ այսպէս ընդարձակ կերպով կը տարածվի խոլերան մեր երկրում:

Կարծես մի փորձաքար էր մեզ համար այդ աղէտաբեր հիւանդութիւնը:

Հազիւ նա երևան եկաւ մեր երկրի մի կէտում, մի քանի օրից յետոյ մենք լսեցինք նրա աւերների մասին հեռաւոր անկիւններում:

Կասպից ծովի ափերից նա շատ շուտով թռաւ մինչև Թիւրքական սահմանը, և ներկայումս լուր կայ, որ նա անցել է և օսմանեան հողի վրա:

Խօլերայի այդպէս արագ տարածվելը ցոյց է տալիս, որ մենք անընդունակ ենք նրա դէմ մաքառելու և նրան իր նախնական սահմերում ոչնչացնելու:

Եւ ահա հողագործ ժողովուրդը, իր աշխատանքի եռուն ժամանակը, մշտական վտանգի մէջ է դրված հիւանդանալու և գուցէ մահանալու:

Մեզ հասած բազմաթիւ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ մեր ժողովուրդը շատ և շատ մեղանչում է առողջապահական պահանջների դէմ, որ քիչ ուշադրութիւն է դարձնում այն խրատների և յորդորների վրա, որոնք մշակված են բժշկական գործի ղեկավարների կողմից:

Բայց միևնոյն ժամանակ ի՞նչ ասենք մենք մեր ինտելիգենցիային պատկանող երիտասարդներին, մեր բժիշկներին, մեր գաւառական գործողներին, մեր ուսուցիչներին և մեր ուսանողներին:

Նրանք, անկասկած, կարող էին շատ օգտաւէտ դեր կատարել ժողովրդի համար, պարզաբանելով նրա առաջ այն պատճառները, որոնք առաջացնում են հիւանդութիւն, և ցոյց տալով նրան այն միջոցները, որոնցով նա կարող էր ազատ մնալ աղէտի ազդեցութիւնից:

Մեզ յայտնի են մի շարք դէպքեր, թէ ինչպէս գիւղացիները կարողացել են մաքառել հիւանդութեան դէմ միայն զգուշութիւններ գործ դնելով ջրի վերաբերմամբ՝ խուսափելով հոսող ջրերից, գործ ածելով միայն աղբիւրի ջուր:

Բայց թէ ջրի և թէ ուրիշ հանգամանքների վերաբերմամբ յայտնի չեն ժողովրդին ամենատարրական տեղեկութիւններ: Գիւղերում չէք հանդիպում դուք ոչ բժիշկների, ոչ դիւրամատչելի լեզուով կազմված գրքոյկների, ոչ այնպիսի թռուցիկների, որոնցով Թիֆլիսի ինքնավարութիւնը հեղեղեց քաղաքի փողոցները և պատերը:

Աղէտը դեռ չէ վերջացել և մի քանի տեղերում նա նոր է մուտք գործում: Նա աշնան ամիսներին դեռ կարող է զարգանալ և տարածվել: Ուստի կարևոր է և անհրաժեշտ, որ այն՝ ինչ ու մինչև այժմ զանցառութեամբ գլացել ենք կատարել մեր գիւղական մեծամասնութեան համար, անենք այժմ և պակասեցնենք սարսափելի աղէտի զոհերի թիւը:

Ահա թէ երբ ինտելիգենտ մարդիկ կարող էին իրանց ցուցումներով, իրանց զրոյցներով, իրանց անմիջական գործունէութեամբ օգտաւէտ գործ կատարել ժողովրդի համար և ապահովել նրա առողջութիւնը վտանգաւոր ազդեցութիւնից:

Գոնէ այժմ զանցառու չը լինենք:

Գոնէ այժմ մեր բարոյական պարտաւորութեան կատարման կոչումը ըմբռնենք և գործի ձեռնարկենք:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բրիւսէլ, 4 օգոստոսի

Ալբէրտ թագաւորը Տիրօլից ժամանելուն պէս՝ անյապաղ գնաց դիտելու ցուցահանդէսի հրդեհը: Գործադիր յանձնաժողովը որոշեց վերաշինել բելգիական բաժինը: (Հ. Գ.)

Պետերբուրգ, 4 օգոստոսի

Բարձրագոյնս հաստատվել է ճարտարապետ Գինզբուրգի նախագիծը, Պօլտաւեան նահանգի Սարոչին քաղաքում Գոգօլի յիշատակին արձան կանգնեցնելու համար: (Հ. Գ.)

Տիւմէն, 4 օգոստոսի

Օգոստոսի 2-ի գիշերը Մալկօվա գիւղի մօտ շրջապատել են յուլիս ամսում փախած 4 տաժանակիրների, որոնք սպանել են 2 պահակների: Նրանցից 2 հոգու բռնել են, իսկ միւսներին աջողվել է թագնվել: Գնդակաձգութեան մէջ վիրաւորվել է մի զինուոր և մի տաժանակիր: (Հ. Գ.)

Տարիֆա, 4 օգոստոսի

Սպանական և գերմանական շոգենաւերի ընդհարումից խեղդվել են 45, ազատվել են 65 մարդ: (Հ. Գ.)

Բիլբաօ, 4 օգոստոսի

Գործադուլ արած բանւորները՝ զինված փայտերով և ատրճանակներով՝ արգելում են աշխատել ցանկացող ընկերներին շարունակել հանքերում աշխատանքները: Քարեր են արձակում այն գնացքների վրա, որոնցով բանւորներ են գալիս: (Հ. Գ.)

Նովօչերկասկ, 4 օգոստոսի

Դանիլովկա արուարձանում այրվել են 36 տներ և հրդեհին զոհ է գնացել մի երեխայ: Գիւղացիները սուր կարօտութեան մէջ են: (Հ. Գ.)

Աթէնք, 4 օգոստոսի

Կանեայից ստացված հեռագրի համաձայն՝ կրետական նոտաբլները հրաժարվել են իրանց դրած թեկնածուներից յունական ազգային ժողովի համար: (Հ. Գ.)

Վիեննա, 4 օգոստոսի

Ֆրանց-Յովսէփ կայսրի ծննդեան 80-ամեակի առիթով շնորհված են զանազան անձանց 500 նուէրներ, որոնցից 114-ը այս [illegible] են ընկել իրանց հասարակական և բարեգործական գործունէութեամբ: (Հ. Գ.)

Կազան, 4 օգոստոսի

Պատմութեան պրոֆէսսոր Պիսկօվսկին զբօսնելու ժամանակ ընկել է գնացքի տակ և մեռել: (Հ. Գ.)

Վիեննա, 2 օգոստոսի

Անցեալ տարի Պետերբուրգում խօլերան ուսումնասիրող պրոֆ. Կրաուսը մամուլի մէջ հետևեալն է յայտնում. «Եւրոպան պարտաւոր է ճնշում գործ դնել Ռուսաստանի վրա, որ վերջինս լուրջ ուշադրութիւն դարձնէ քաղաքների հակաառողջապահական պայմաններին, որովհետև համաճարակը սպառնում է ամբողջ Եւրոպային»: («Б.»)

Կոպէնհագէն.—Մարզասիրական կօնգրէսում, տիկ. Զազլօվսկայա, ազգութեամբ ռուս, խօսելու մերժումն ստանալով՝ դաշոյն ճօճեցրեց նախագահի դէմ. Նրան իսկոյն խելագարների տունը տարան:

Վիեննա.—Հրաւիրվում է լեհական կուսակցութիւնների ժողով, որը պիտի զբաղվի պրովօկացիայի դէմ կռուելու միջոցների ընտրութեամբ:

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Թէհրան, 4 օգոստոսի

Շիրազի նահանգապետ է նշանակվել պրինց Էյն-ուդ-Դօվլէն: Կառավարութիւնը միջոցներ է ձեռք առել ճնշելու խռովութիւնը Խարում, Թէհրանի շրջակայքում, ուր ապստամբվել է կուսամլու ցեղի պետ Բէշիր-Սուլթանը: Այդ նպատակով ուղարկվել է ձիաւոր գունդ թնդանօթների հետ: Սպահանի նահանգապետին հրաման է ուղարկվել զօրք ուղարկել Կաշան՝ Նաիբ-Հասան աւազակի դէմ: Ռուսական միսսիայի պահանջմամբ պարսկական բանտից ազատ է արձակվել ռուսահպատակ ֆէդայի Նօվրուզովը, որը մասնակցել է վերջին ապստամբութեան: (Հ. Գ.)

Կ. Պօլիս, 4 օգոստոսի

Սալօնիկում ժողովուրդը՝ առանց ազգերի խտրութեան՝ միտինգում բողոքել է չէտաների գործունէութեան դէմ: (Հ. Գ.)

Եփրեմը Թէհրանից ուղարկել է Մոսկվա «Русское Слово»-ին մի հեռագիր, որի մէջ արդարացնում է իր գործողութիւնները ու մեղադրում Սաթթար և Բաղր խաներին, որոնք իբր թէ յարաբերութիւնների մէջ են եղել յետադէմների հետ, կատարել են մի քանի քաղաքական սպանութիւններ և ցանկացել են մէջլիսից հեռացնել դեմօկրատական տարրերին՝ փոխարինելով նրանց մօլլաներով:

«New-York Times»-ի ասելով Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում կազմակերպվել է մի խոշոր ընկերութիւն՝ 150 միլիոն դօլլար (դօլլարը մօտ 1 ր. 90 կ.) դրամագլխով: Ընկերութեան նպատակն է շահագործել Փոքր Ասիայի, Տիգրիսի, Եփրատի ակունքների մէջ գտնված հանքերը և երկաթուղիներ կառուցանել նոյն տեղերում: Առաջին երկաթուղու գիծը կառուցվելու է Սեվազից սկսած (Կըզըլ-Իրմակ գետի վրա) մինչև Հալէպ, իսկ այնտեղից մինչև Ալէքսանդրէտի ծովածոցը: Լրագրի ասելով, ընկերութիւնը այս գծի երկու կողմերին 20 տարվայ կապալով 40 կիլօմետր ($38\frac{1}{2}$ վերստ) լայնութեամբ հողեր է վերցրել՝ նրանց շահագործելու նպատակով:

Սօֆիա, 2 օգոստոսի

Մի նոր կազմակերպութիւն կոչ է ուղղել ժողովրդին՝ ճնշում գործ դնել Բուլղարիայի վրա, որ վերջինս վճռական ոյժով ազատէ մակեդոնական բուլղարներին: («Б.»)

ՈՒՂԵՒՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

III

Կոպէնհագէն, 11 օգոստոսի

Այս նամակը գրում եմ Կոպէնհագէնից, ուր գտնվում եմ ահա երկու օր է: Դանիայի մայրաքաղաքը նոյնպէս կենդանի շարժման մէջ է այս օրերս, ինչպէս կենդանի շարժման մէջ էր Ստոկհօլմը մի շաբաթ առաջ խաղաղութեան կօնգրէսի առիթով: Այժմ էլ Կոպէնհագէնում [illegible] է Le congrès international de l'assistance sociale (Հասարակական բարեգործութեան միջազգային կօնգրէսը), որ պաշտօնական է և որի ֆրանսիական ներկայացուցիչը հանրապետութեան նախկին նախագահ Լուբէն է:

Այս կօնգրէսի նպատակն է կազմակերպել տառապող մարդկութեան օգնութիւն հասցնելու գործը րացիօնալ հիմունքների վրա: Բոլոր երկիրները շահագրգռված են այդ կարևոր հարցով, ուստի և բոլոր քաղաքակիրթ երկիրները ուղարկել են իրանց ներկայացուցիչները:

Կոպէնհագէնը աւելի գրաւիչ, հոյակապ տպաւորութիւն է թողնում, քան Ստոկհօլմը: Եւ դանիական ազգը նոյնպէս տարբերվում է շուէդականից նրանով, որ աւելի գերմանացած է: Հասարակական և պետական շինութիւնները Պարիզի նոյնանման շինութիւնների տեսքն են ներկայացնում: Լրագրութիւնը չափազանց ծաղկած է: Սօցիալ-դեմօկրատները մեծ թերթեր ունեն և մեծ պատրաստութիւններ են տեսնում ընդունելու օգոստոսի 28-ին Կոպէնհագէնում գումարվող սօցիալ-դեմօկրատների միջազգային կօնգրէսի անդամներին:

Կեանքը եռում է, զեռում է այստեղ, և չեմ կարծում, որ ի տես այս կենդանութեան, այս մեզ համար աներևակայելի և անիրագործելի եռանդուն շարժման՝ մենք ասիացիներս իրաւունք ունենայինք ասելու, թէ մենք էլ ապրում ենք: Ոչ, մենք միայն աճեցական, կենդանական կեանք ենք վարում:

Որպիսի՜ ահագին տարբերութիւն, օրինակ, այստեղի սօցիալիստների և մեր երկրում իրանց սօցիալիստ անուանողների միջև: Մի սօցիալ-դեմօկրատ, որին ես այստեղ պատմեցի, թէ ինչպէս մեզ մօտ մամուլի մի ներկայացուցիչ սպանվեց իրան սօցիալիստ անուանող մի կազմակերպութեան ձեռքով, զարմացած բացագանչեց. «Այդ անկարելի է, այդպիսի կազմակերպութիւնը երբեք սօցիալիստ լինել չէ կարող»:

Վաղը մեկնում եմ Բեռլին:

Հ. Առաքելեան

ՓՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պօլիս, 28 յուլիս

Ներքին գործերու մինիստրը դարձաւ իր ճամբորդութենէն: Կը կարծուի, որ իր քննական պտոյտը Ալբանիոյ այլեայլ մասերուն մէջ օգտակար եղած ըլլայ: Իր ճամբորդութեան գլխաւոր շարժառիթ կը համարուէր այդ դժգոհութիւնը, որ բարձրացած էր Բուլգարիոյ մէջ, քրիստոնեայ մակեդոնացիներու զէնքերը ժողվելու առթիւ, գործ դրուած պաշտօնական խոշտանգումներու դէմ: Մինիստրը անձամբ պէտք տեսաւ քննելու այդ դժգոհութիւնները և տեղին վրայ ըմբռնելու թէ որչափ հիմնաւոր էին:

Ան հազիւ թէ դարձած, վարչապետն է հիմա, Հակկը փաշա, որ ճամբայ կ'ելլէ դէպի Եւրոպա: Արձակուրդի շրջան է. ուղղը ճամբայ մը կը բռնէ: Վարչապետի ծրագրի մասին այժմէն ոչինչ կ'ըսուի: Բայց հաւանաբար ան կունենայ իր անպաշտօն տեսակցութիւնները, որոնք, այդ պատրուակին ներքև, պիտի բերեն իրենց նորութիւնը:

Ամենէն լաւ նորութիւնը սա է—ամեն ենթադրութիւններէ դուրս—որ Հակկը փաշա կը նորոգուի անշուշտ մտքով ու մարմնով. իր ականջները, որոնք յոգնեցան ասիական լուրերէն, աչքերը, որոնք հիւանդացած ըլլալու են ասիական անմշակութեան տեսքէն, իրենց հետ երկրին կը բերեն բարեկարգութեանց նոր ծրագիրներ՝ Թիւրքիան դնելու օր մը երկիրներու շարքին մէջ:

Վարչապետին փոխանորդութիւնը յանձնուած է Շեվքէթ փաշայի:

Ֆէնէրի յոյն պատրիարքարանը մեծ վրդովի մէջ է: Յանձնախումբ մը, որ պաշտօն ունէր տեղեկագիր պատրաստելու, թէ հնա՞րկ է ազգ. ժողով գումարելու եկեղեցիներու հարցի մասին, իր աշխատութիւնները աւարտած է:

Պատրիարքը գրաւոր դիմում ընելով արդարադատութեան մինիստրին՝ արտօնութիւն խնդրած էր ազգ. ժողով գումարելու: Մինիստրը մերժած է տալ այդպիսի արտօնութիւն մը: Միևնոյն ատեն պատրիարքը արդէն շրջաբերական ուղարկած է բոլոր թեմական միտրոպոլիտներուն, հրահանգելով որ իրենց պատգամաւորները ընտրեն: Ըստ այդ շրջաբերականի՝ ժողովը պիտի բաղկանայ 12 սինոդականներէ, քաղաքական ժողովի 8 անդամներէ, 8 պաշ- [illegible] -րիարքարանի 87 թեմերէն ընտրուած 87 պատգամաւորներէ:

Շրջաբերականը կարելի է համառօտել սապէս.

1) Սահմանադրական ռէժիմը, որ եղբայրութիւն, հաւասարութիւն և ազատութիւն պիտի բերէր ճնշուած տարրերու, իրականութեան մէջ բոլորովին հակառակն է և նոյն իսկ «ազատութիւնը» աւելի գէշ կերպով մեկնուեցաւ ու գործադրուեցաւ:

2) Սիստեմատիկ հալածանք յոյն հասարակութեան դէմ և բռնաբարում անհատական իրաւունքներու և առանձնաշնորհութեանց:

3) Փոքրիկ օրինազանցութիւն մը, օրինակ գինովութիւն մը, պատճառ կը բռնուի «ապստամբութեան գրգռութիւն» նետել քաղաքի մը կամ հասարակութեան մը վրայ. ծանր պատիժներ կը տրուին, անմեղներ կը դատապարտուին. կրօնքն ու եկեղեցականները կանպատուուին. եկեղեցիներն ու գերեզմանները կը խուզարկուին:

4) Ծիծաղելի մատնութիւն մը կը բաւէ որ քահանաներ ու երեւելիներ բանտարկուին, դաւադիրներու վայել ընթացքի ենթարկուելով: Զէնքեր հաւաքելու պատրուակի ներքև՝ ծեծ, խոշտանգանք անպակաս են շատ տեղեր ու այդ ամէնը սահմանադրական պաշտօնեաներու ձեռքով:

5) Քահանաներ ու առաջնորդներ կը ձերբակալուին ու կը բանտարկուին իշխանութեանց կողմէ. կուրացուին դպրոցական ու կրօնական առանձնաշնորհութիւնները. վանքերու և քրիստոնեայ համայնքներու սեփականութիւնները կը գրաւուին. ցեղագրական վիճակ փոխելու և քրիստոնեայ ազգաբնակչութիւնը տկարացնելու համար՝ դուրսէն իսլամ գաղթականներու տեղ կը տրուի, մինչդեռ միւս քրիստոնեայ գաղթականներու հաստատութիւնը խստիւ կարգիլուի:

6) Փոքր Ասիոյ Ստավրիթ կոչուած քրիստոնեաները, որոնք դարերով պահած են իրենց քրիստոնէութիւնը, այսօր քրիստոնեայ չեն ճանչցուիր, և մարդահամարներուն մէջ, հակառակ իրենց բողոքին, իբր իսլամ կարձանագրուին: Անչափահասներու բռնի իսլամացումի ձգտումը կը շարունակուի յայտնապէս:

7) Կը բողոքէ, որ բուլղարներուն, պատրիարքական շրջաբերականի բառով՝ «հերձուածողներուն», նոր բէրաթներ կը տրուին կառավարութեան կողմէ և չեն ճանչցուիր օրթոդոքս եկեղեցիին իրաւունքն և կարգը:

Այդ և ուրիշ կարգ մը թուարկութիւններով՝ շրջաբերականը կը զգացնէ ազգ. ժողովի մը գումարումն և ազգին կամքը՝ տալու համար այն որոշումը, որ «Աստուած պիտի թելադրէ այդ մեծ ժողովին»:

Ազգ. ժողովը պիտի բացուի յառաջիկայ 1/14 սեպտեմբեր:

«Թանին» բուռն յօդուածով կը քննադատէ պատր. շրջաբերականը: Կըսէ. «Պատրիարքարանն իր այդ շրջաբերականով, երիտասարդ և ազատ Թիւրքիոյ մասին, իր թևերը վեր սոթտած հակառակորդ ըմբիշի մը պէս մէջտեղ կելլէ ու կը խոյանայ սահմանադրական ռէժիմի վրայ...: Այդ շրջաբերականը, ծայրէ ի ծայր, հաւաքածոյ մըն է խռովարարութեան և դրդումներու»:

Արդարադատութեան գործերու մինիստրը արտօնած չէ, ինչպէս գրուեցաւ, ազգ. ժողովի գումարումը, որովհետև յունական պատրիարքարանի առանձնաշնորհութեանց մէջ այդպիսի տրամադրութիւն մը չկայ։

Յոյն պատրիարքարանը թէև գովելի իր energie-ին մէջ, բայց ամեն անգամ սահմանադրութիւնն է, որ կը դատափետուի, և կերպով իւիք գովեստ կայ համիդեան ռէժիմին։ Ի՞նչ յանցանք ունի սահմանադրութիւնը. չարիքը գեղծումներէն կը բղխի. ատ է, որ դատապարտելի է։ Ապա թէ ոչ, գոնէ կարգ մը բաներու մէջ գովելի է իր բռնած դիրքը, օրինակ՝ անչափահասներու բռնի իսլամացում, իսլամ գաղթականներու հաստատութիւն, քրիստոնեայ գաղթականութեանց մերժում, բռնաբարութիւն նոյն իսկ իրաւունքներու։ Եթէ շրջաբերականը խմբագրուէր այդպիսի կէտերով, բողոքէր նոյն իսկ Ստավրիթ (խաչապաշտ) ըսուած քրիստոնեաներու մասին, բուլղարները «հերձուածող» չհռչակէր, արժանի կը հանդիսանար ամեն գնահատութեան։ Մենք՝ հայերս—թերևս ամենքէն առաջ—կը փութայինք շնորհակալ ըլլալու «տիեզերական» պատրիարքին, որ յոյն քրիստոնէական իրաւունքներու հետ պաշտպանած պիտի ըլլար սոմ. բոլոր քրիստոնեայ տարրերու ունեցած քրիստոնէական իրաւունքները։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐՆ ԵՒ ՕՏԱՐԱԽՕՍ ՀԱՅ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Օտարախօս հայ ծխական դպրոցների մասին գրելիս *) մենք լիայոյս էինք, որ Էջմիածնում գտնվող ուսումնական խորհուրդն արդէն ձեռնարկել է մի նոր յարմար ծրագիր մշակելու հայ ծխական դպրոցների համար, որն իր հերթին պէտք է պարտադիր լինէր և անթերի գործադրվէր բոլոր դպրոցներում։ Այնտեղ մենք աշխատեցինք ցոյց տալ հայ դպրոցական իրականութեան մէջ աչքի ընկնող տարապայման դրութիւնը և ցոյց տուինք, որ մինչ այդ գոյութիւն ունեցող ծրագիրներից և ոչ մէկը չէ կարելի գործադրել յիշեալ՝ այն է օտարապայման դպրոցներում, ուր երեխաները դպրոց մտնելիս հայերէն և ոչ մի բառ չեն իմանում։ Մեզ հետ միասին և ամբողջ ուսուցչութիւնն ու դպրոցական գործով հետաքրքրվող հասարակութիւնը սպասում էին, որ այդ ուսումնական խորհուրդը նոր բան կը տայ, կամ գոնէ առնուազն կը հարթէ մի քանի անհարթ տեղեր նախկին ծրագրում։

Ամբողջ մի տարի սպասելուց յետոյ լոյս է տեսնում խոստացված նոր ծրագիրը, որը պէտք է մի տարով պարտադիր լինի և, անթերի գործադրվելուց յետոյ, անկեղծ ձևով կարծիքներ հաւաքվի՝ յետագայում մշակելու համար։

Բայց մենք ապշած մնացինք, երբ սկսեցինք համեմատել 1906 թւականին կազմված նախագիծ-ծրագրի հետ։ Երևակայեցէք, որ ոչնչով չէ փոխվել. նոյնն է, տառացի նոյնը, եթէ ի նկատի չառնենք, որ կրօնից կրճատված է Իսահակի պատմութիւնը (Ա. բաժ.) և մի քանի շարականներ աւելացված Զ. բաժանմունքում. որ՝ ըստ 1906 թ. նախագիծ-ծրագրի՝ ռուսաց լեզուն, որ սկսվելու էր Գ. բաժանմունքից, կիսված է այդ դասընթացքը և բաժանված Բ. և Գ. բաժանմունքների վրա, և մէկ էլ՝ որ ի մի է ձուլված հայրենագիտութեան ու հայոց պատմութեան դասերը Գ. և Դ. բաժանմունքներում։ Ուրիշ ոչ մի փոփոխութիւն, լրացում կամ կրճատում։

Մեզ մի բան շատ է զարմացնում. միթէ ուսումնական խորհրդի յարգոյ անդամները հին նախագիծ-ծրագիրը արտատպելուց առաջ չը գիտէին այդ նախագիծ-ծրագրի գոյութեան մասին. չը գիտէին, որ այդ ծրագրով է անցնում մեր դպրոցների մեծագոյն մասը. և եթէ գիտէին այդ, ու գիտէին որ անփոփոխ պէտք է արտատպվէր, էլ ինչո՞ւ էին յապաղեցնում, ինչո՞ւ էին մի ամբողջ տարի ուշացնում և սկզբից չէին յայտնում, որ ուսուցիչները տան իրանց կարծիքներն ու դիտողութիւնները հէնց այս տարի, և մենք ստիպված չէինք լինի դարձեալ մի տարի ևս երերեալ ու տատանեալ դրութեան մէջ մնալու, խօլա տանելու։

Բայց այդ չարիքներից փոքրն է և համարեա աննշանը։ Ուսուցիչը կանգնի այնպէս՝ ինչպէս մինչև այժմ, այն է ըստ նախագիծ-ծրագրի 1906 թ., և տարվայ վերջին կը տայ այս կամ այն առարկայի մասին իր դիտողութիւնները և իր ցանկալի համարածը, կը հաւաքվեն այդ կարծիքները և խմբագրվելով դուրս կը բերվի մի ընդհանուր եզրակացութիւն, որը և կը ծառայէ ծրագրի մշակման գործին։

Այդ կը լինի միայն հայախօս վայրերից ստացված եզրակացութիւններ։

Իսկ օտարախօս վայրերի դպրոցների պաշտօնավարողների կողմից ի՞նչ պատասխան կարող է ստացվել այդ անկեղծային մասնակցելիս։ Միայն մի պատասխան և այն էլ այժմ, դպրոցական տարին չը սկսված.— անկարելի է որպէս փորձ անգամ անթերի գործադրել։

Եւ իրօք, վերցնենք դասերի աղիւսակը և տեսնենք՝ կարելի՞ է արդեօք այդ բովանդակութեամբ ու պահանջով դասաւանդել այն աշակերտներին, որոնք դպրոցում շատ քիչ բանով են տարբերվում օտարազգի երեխաներից՝ շնորհիւ հայերէն լեզուն չիմանալուն։

Ահա աղիւսակը.

Առարկաներ.	Բաժանմունքներ.						
	Ա.	Բ.	Գ.	Դ.	Ե.	Զ.	
1) Կրօն . .	2	2	2	2	2	2	=12
2) Հայոց լեզու .	6	6	5	5	5	4	=31
3) Ռուսաց լեզու	—	6	5	5	5	4	=25
4) Վայելչագրութիւն. .	—	1	1	1	—	—	= 3
5) Թուաբանութիւն. .	5	5	4	3	3	2	=22
6) Նկարչութիւն.	2	2	1	2	1	1	= 9
7) Երգեցողութիւն	2	2	2	2	2	1	=11
8) Արհեստներ (ձեռագործ, ձեռարուեստ) .	2	2	2	2	2	2	=12
9) Իրագննութիւն.	2	2	—	—	—	—	= 4
10) Հայրենագիտութիւն .	—	—	4	4	—	—	= 8
11) Բնական գիտութիւններ .	—	—	3	3	3	3	=12
12) Երկրաչ. ձևագիտութիւն	—	—	1	1	1	1	= 4
13) Ռուսաստանի աշխարհագր.	—	—	—	—	—	1	= 1
14) Ընդհանուր աշխարհագրութ.	—	—	—	—	1	2	= 3
15) Պատմութիւն ռուսաց. .	—	—	—	—	1	1	= 2
16) Պատմութիւն հայոց և ընդհ.	—	—	—	—	3	3	= 6
17) Քաղաքակ. ուսումնք. .	—	—	—	—	—	1	= 1
18) Առողջապահութիւն. .	—	—	—	—	—	2	= 2

Մարմնամարզարան ունեցող դպրոցներում շաբաթական 2-ական դաս, իսկ չունեցած տեղերում օրական 25-ական րոպէ։

Ահա դասացուցակը։ Նոյնպէս է և դասերը ըստ իրանց բովանդակութեան, որոնց լրիւ կերպով անցնելը օտարախօս մանկան հետ ոչ որ [illegible] հնարաւոր չի համարի, չեմ ասում թէ որքան մանկավարժական կը լինի։ Միթէ կատարեալ աբսուրդ չի լինի, որ առաջին բաժանմունքում, ուր դեռ հայր և մեր բառերը չը գիտեն, և գիտենալու համար հարկաւոր է 2—3 ամիս սիստեմատիկաբար անցնել, իսկոյն սկսել «Հայր մեր» սովորեցնել, նոյնիսկ աշխարհաբար. մինևոյն չէ՞ հայերէն չիմացող երեխայի համար՝ աշխարհաբար է թէ՞ գրաբար. չէ՞ որ երկուսն էլ նրա համար խորթ են և օտար, հետևապէս համաչափ դժուար։ Կարելի՞ է, արդեօք, այդպիսի երեխային հնչական մեթօդով, նորմալ բառերի օգնութեամբ կարդալ սովորեցնել, երբ այդ նորմալ բառը պէտք է դուրս բերվի նրան ծանօթ շատ բառերի շարքերից. և կամ կա՞յ մի այլ մեթօդ, որով կարողանանք իսկոյն ևեթ, առանց բացատրելու, սովորեցնել տառերի ճանաչողութիւնը։ Կարելի՞ է, արդեօք, այդ երեխային ուսուցանել և խնդիրների միջոցով զարգացնել հաշւելու ընդունակութիւնը սկզբից ևեթ, քանի դեռ նա չէ վարժվել և չէ սովորել իւրացնել մէկ, երկու բառերի նշանակութիւնը։

Նոյնը և միւս առարկաների նկատմամբ թէ առաջին և թէ յետագայ բաժանմունքներում, եթէ այդ անցնում են երեխային օտար և խորթ լեզուով. կարելի է և հնարաւոր այն դէպքում միայն, երբ դասաւանդութեան լեզուն մայրենի լեզուն է։

Բայց մայրենի լեզուով կարելի է և կարող ենք տանել։ Այդ առիթով մենք շատ ենք գրել և ցոյց տուել, որ ներկայումս անկարող ենք *) և եթէ կարողանանք էլ, ինքը՝ այդ դպրոցներ պահող հասարակութիւնը թոյլ չի տայ, քանի որ նա ուզում է դպրոցի միջոցով իր որդուն աւանդել իր ազգային լեզուն, և մենք դէմ գնալ չենք կարող նրա արդար պահանջին։

Ուրեմն այդ ծրագրով անցնելը նոյնիսկ մի օրով անհնարին է, քանի որ երեխայի գիտեցած մայրենի լեզուով չէ և չէ էլ կարող լինել։ Հարկաւոր է փոխել այդ ծրագիրը, վերացնել օտարախօս դպրոցների համար պարտադիր լինելուց, կամ գոնէ պէտք է այդ ծրագրին կից տրվէր նաև այդ տիպի դպրոցների համար ջոկ՝ յարմար ծրագիր, որտեղ Ա. բաժանմունքում փոխանակ զատ-զատ առարկաների դասաւանդութեան՝ միացված լինէին այդ առարկաները և դասաւանդութիւնը կրէր մանկապարտէզի բնոյթ, որտեղ երեխաները խաղի, պարի, երգի, նկարի միջոցով վարժվէին կենդանի խօսակցութեան մէջ, կարողանային արտայայտել իրանց մտքերը նոյն իսկ ամենաթոթով լեզուով։

Հարկաւոր է Բ. բաժանմունքը փոխել Ա.-ի և անցնել այն, ինչ պէտք է անցվի Ա. բաժանմունքում, և այդպիսով ուսման ընթացքը պակասեցնել մի տարով։

Այդպիսի տիպի դպրոց և դրան յարմար ծրագիր է պահանջվում։ Այն ժամանակ միայն կարելի է այդօրինակ ծրագիրը պարտադիր դարձնել և պահանջել անթերի գործադրել, երբ նա կազմված կը լինի այդ պայմաններին ծանօթ, դպրոցական գործի տեսական ու գործնական բովով անցած մասնագէտ և պաշտօնավարած ուսուցիչների մասնակցութեամբ։

Իսկ պնդել՝ որ ներկայ ծրագիրը անթերի գործադրվի՝ առնուազն կը լինի անհեթեթութիւն. այդպիսով ստիպած կը լինենք կամ «փակել բաւականին խոշոր թիւ կազմող այդ դպրոցները և դուրս շպրտել երեխաներին փողոց, կամ անցնել առարկաները երեխաների մայրենի լեզուով, և կամ թոյլ տալ, որ ուսուցիչը մտնի դասարան և զոռով պատուաստէ երեխաների գլխներում այն ամենը, ինչ նախագծված է ծրագրում, և այդպիսով խղճօտացնի ու թմրացնի նրանց, որոնց պարտաւոր էր կրթել, զարգացնել։ Թող հոգևոր իշխանութիւնը ընտրի դրանցից մէկն ու մէկը։

Իսկ այդ վայրերում պաշտօնավարող հայ ուսուցչին կը մնայ՝ ծրագիրն ու հրահանգը ստանալուն պէս իսկոյն ևեթ, առանց տարվայ վերջին կայանալիք անկեղծային սպասելու, յետ դարձնել նրանց հետևեալ մակագրութեամբ.—«Անցնել որպէս պարտադիր և անթերի, նոյնիսկ մի տարով, անհնարին է։ Դպրոցս օտարախօս է և զուրկ լեզուային կարողութիւնից՝ հասկանալու և արտայայտելու ծրագրում պահանջված առարկաների մասին ուսուցչի տուած բացատրութիւնները ամենաթոթով լեզուով անգամ։ Հարկաւոր է նոր, պայմաններին յարմար, պայմաններն ուսումնասիրած, մանկավարժութեան տեսականի ու գործնականի բովով անցած ուսուցիչների կազմած ծրագիր, որտեղ ազատ խօսակցութիւնը աւելի տեղ բռնի և դպրոցական առաջին տարիները մանկապարտէզի բնոյթ կրեն»։

Ահա օտարախօս հայ դպրոցների ուսուցիչների տալիք պատասխանը։

Ար. Ստամբուլցեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Բաթում, 3 օգոստոսի

Օրերումս բացվել է մի սոսկալի ոճրագործութիւն։ Անցեալ կիրակի օրը Կախաբէր մի հայ-կաթօլիկի տան մէջ նախապէս բռնաբարում են մի մօր իր 14 տարեկան աղջկայ հետ և ապա սպանում ու միևնոյն տան մէջ [illegible] նպատակը եղել է կողոպտելը։ Իմացել են, որ կինը ունի մի քանի հազար րուբլի դրամ, խաբէութեամբ տանելով քաղաքից դուրս՝ այդ տանը պահանջում են դրամները։ Կինը պատասխանում է, որ մօտը ոչինչ չունի. յայտնվում է 3—4 հազար րուբլու գրքոյկը։ Առաջին բացասական պատասխանից յետոյ վիրաւորում են կնոջը։ Յետոյ նկատելով որ փող չունի մօտը՝ բռնաբարում են ու սպանում։ Սպանվածի ազգականները, նկատելով որ չը վերադարձան իրանց բարեկամները, իմաց են տալիս ոստիկանութեանը. երէկ թաղած տեղից հանում են դիակները։ Սպանութեան մասնակցողներից մի քանիսը ձերբակալված են։ Առ այժմ յայտնի չեն անձնաւորութիւնները, մանրամասնութիւնները յետոյ։

**

—

Ախալցխա, 1 օգոստոսի

Խօլերան այժմ մեղմանում հոգեվարքի մէջ է. վերջին 5—10 օրվայ ընթացքում քաղաքումս համարեա թէ զոհեր չը կան և հիւանդացողներն առողջանում են. այժմ բարակներում միայն երեք հիւանդներ կան, որոնք նոյնպէս առողջանալու վրա են. դժբաղդաբար, գիւղերի շրջաններում պատահել են մի քանի մահացութեան դէպքեր խօլերայից։

Հիւանդութեան վերացումն և այդպիսի նպաստաւոր փոփոխութիւնը կրօնասէր ջերմեռանդ հայ ժողովուրդը մասամբ վերագրում է «Եօթն վէրաց» Աստուածամօր պատկերին, որ մի քանի օր առաջ բերին Ալէքսանդրօպօլից։ Հաւատը ծնեցնում է և յոյս, սակայն յոյսը չը պէտք է դէպի չարը գործածել, ի նկատի ունենալով ռուսական առածը՝ „береженаго и Богъ бережетъ“. «Եօթն վէրաց» պատկերին ջերմեռանդ աղօթողների թիւն անհամեմատ է՝ յընթացս 5—6 օրվան լուսաբացից սկսեալ մինչև կէս գիշեր, և վերջին աղքատը չէ խնայում իր լուման ձգելու սր. պատկերի մօտ դրված գանձանակում, որից անշուշտ գոյանում է մի պատկառելի գումար, ոչ պակաս 1000 րուբլուց. նոյնչափ և գուցէ աւելի ծախսված է պատգամաւորութեան գնալ-գալուն, դիմաւորութեան, ճանապարհ ձգելու և այլն։

Ա. Աս.

ՎՏԱՆԳԸ ԴՌՆԵՐԻՍ ԱՌԱՋ

—

Երևան, 29 յուլիսի

Խօլերան տարածվում է. Երևանն անտարբեր է։

Մեծապատիւ հիւըը ժանիքները սրած մօտենում է մեր դռներին։ Վերջապէս յուլիսի 26-ին մի քանի մշակներ և մի երկու քայքայված աղքատ ֆուրգոններ երևացին քաղաքի գլխաւոր փողոցներում։ Հարկաւոր է տեսնել՝ երբ աղբով լի ֆուրգոնը շարժվում է փողոցով առաջ. ֆուրգոնի ճեղքերից արևի տակ այրված թափվող աղբից ինչպիսի փոշի է բարձրանում։ Քաղաքի գլխաւոր փողոցները և հրապարակը թէև ամեն այս օր ջրում են, բայց ջրելուց երկու երեք ժամ յետոյ չորանում է և մի թեթև քամուց այնպիսի փոշի է բարձրանում, որ աչքերը է դառնում փողոցով անցուդարձ անողներին։ Գլխաւոր փողոցներից մի քանիսում հոսում են առուները։ Միանգամայն անուշադիր են մնում այդ առուները, որոնք լցված են ամեն տեսակ կեղտով. ջրի պակասութեան պատճառով քաղաքի բնակիչների մեծ մասը այդ առուներից ջուր է վերցնում ոչ թէ միայն լուանալու համար, այլ և խմելու։

Իմ հարևան Մուսաբէգեանը ամսիս 27-ին ինձ առաջնորդեց Աստաֆեան փողոցին կից Ցանլը-բազար մասը. և ի՜նչ. ամեն տեսակ կեղտոտութեամբ մի ահագին կոյտ թափված էր փողոցի մէջ աչքիս առաջ։

Քաղաքի մի քանի փողոցները այս ձևով մաքրելը ոչ մի օգուտ չի բերի ժողովրդին։ Հարկաւոր է կողմնակի փողոցները, քաղաքի խուլ անկիւնները մաքրել, ուր խօլերան ամեն պատրաստութիւն կը գտնի իր պէս հիւրի համար։

Վտանգը հասել է մեր դռների առաջ, նոր ենք մտածում, նոր ենք միջոցներ ձեռք առել քաղաքը մաքրելու և այն էլ ձևականապէս, իսկ իրականապէս՝ ոչ։

Այս ձևով քաղաքը չի մաքրվի և աննպատակ են բոլոր ծախքերը։ Ցանկալի էր, որ քաղ. ուպրաւան լուրջ ուշադրութիւն դարձնէր, դուրս գար տնից, անձամբ հսկէր և հետևէր գործին, գլխաւորապէս ուշադրութիւն դարձնէր քաղաքի այն մասերի վրա, որոնք հեռու են աչքից, ուր դիզված աղբի կոյտերի մէջ վխտում են միջատները, որից տարածվում է գարշահոտութիւն։

Իրականապէս նկատվում է, որ խօլերան 1892 թւականի պէս մեծ զոհեր է տանելու, որովհետև քաղաքը մաքրութեան կողմից ոչ մի քայլ առաջ չէ գնում։

Շամբաթ

«ԾԽԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ» ԱՅԺՄ ԳՈՐԾԱԴՐՎՈ՞ՒՄ ԵՆ

—

Յաճախ է պատահում, որ ծխական ընդհանուր ժողովներում երբեմն թեր ու դէմ կարծիքներ են տեղի ունենում «ծխական կանոնների» առիթով։ Ծխականներից ոմանք առարկում են և պնդում, թէ «ծխական կանոնները» ոյժի մէջ են, և աշխատում են նրա այս և այն կէտը՝ յօգուտ իրանց՝ հիմնաքար ընդունել և ծառայեցնել իրանց շահերին. ոմանք էլ՝ միանգամայն բացասում են և համարում են, որ «ծխական կանոնները» գործադրութեան մէջ չեն և չեն էլ կարող լինել… դարձեալ իրանց շահերն ի նկատի ունենալով… Փոխարքայի ժամանակաւոր կանոնների դէմ։ Այդ հանգամանքը որոշ դժուարութիւններ է առաջ բերում ծխական ընդհանուր ժողովների ղեկավարների համար։

Ցանկալի էր, որ ձեռնհաս անձինք կամ հոգևոր իշխանութիւնը հրապարակով յայտնէր և պարզէր, թէ վերոյիշեալ «ծխական կանոնները» ներկայումս ոյժ ունե՞ն, պարտադի՞ր են ծխական ժողովների համար թէ՞ ոչ։

Ըստ մեր դիտողութեան՝ անհրաժեշտ էր, որ «ծխական կանոնները» դեռ ևս գործադրութեան մէջ մնային, քանի որ նրանք ծխական ժողովների վերաբերութեամբ ունեն այնպիսի կէտեր, որոնք անտես են արված «ժամանակաւոր կանոնների» մէջ և որոնք միանգամայն լրացնում են նրանց պակասը։

Կարապետ Ղազարեան

ԽՈԼԵՐԱ

—

◆ Բյուլլետեն.—Օգոստ. 4-ի առ. ժամը 9-ից մինչև օգոստ. 5-ի առ. ժամը 9-ը Թիֆլիսում խօլերայով հիւանդացել են 3 հոգի, իսկ խօլերանման հիւանդութեամբ՝ 1 հոգի։ Հիւանդանոցում կային 35 հոգի, աւելացել են 3, մեռել են 5, ներկայումս կան 33 հոգի։

◆ Օգոստոսի 4-ին Թիֆլիսում խօլերային նշաններով հիւանդացել են և ուղարկվել բարակները. 1) Արսէնալնի նրբափողոցում՝ № 8 տանը՝ Նիկօլայ Իվանօվիչ Արչաքաձէ, 10 տար.։ 2) Արղութինսկայա փող. № 5 տանը՝ Կօզլօվի կօնֆէտային գործարանի բանւոր Արամ Օհանէսօվիչ Պարսօվը, 24 տար.։ 3) Ռուսթավէլսկայա հրապարակ իր սեփ. տանը Թիֆլիսեցի Մաբիա Եակօվլէվնա Նացվալաշվիլին, 45 տար.։ 4) Պեսկօվսկայա փող. № 3 տանը՝ Թիւրքահպատակ Արմենակ Մամինօվի որդին, 18 տար.։ 5) Բեբուտօվսկայա փող. № 40 տանը՝ Սրեմիա Դանիելեանց։ Հիւանդացողների բնակարաններում ախտահանութիւն է կատարված։

—

Կարմիր Խաչի գլխաւոր վարչութիւնը դիմել է մի շարք նոր միջոցների՝ խօլերայի դէմ կռւելու գործում։ Սիմբիրսկի և Կազանի նահանգները ուղարկված են չորս բժշկական սանիտարական խմբեր, Կօստրոմա է փոխադրված 5000 ր. ճաշարաններ կազմակերպելու համար։ Բացի այդ՝ բացված են նոր ճաշարաններ 200 երեխաների համար. նոր բացած 7 թէյարաններում և 8 ճաշարաններում օրական տրվում է 4000 ճաշ և 6000 բաժին թէյ։

—

«Մշակի» № 166-ում տպագրված էր «Прав. Вѣст.»-ից քաղված հաշւետուութիւն խօլերայի մասին մինչև յուլիսի 18-ը։ Նոյն լրագրի հրատարակած նոր հաշւից երևում է, որ յուլիսի 18-ից մինչև 24-ը հիւանդացողների թիւը հաւասար է եղել 23,363 հոգու, որոնցից մեռել են 10,205 հոգի։ Առհասարակ այս տարի մինչև յուլիսի 24-ը հիւանդացել են 81,083, իսկ մեռել 35,759 մարդ։ Ցաւալին այն է, որ, բոլոր տեղեկութիւններին նայած, հիւանդութիւնը խոշոր կենտրոններից անցել է գիւղը, որ դժուարացնում է ախտի դէմ կռիւը։ Խօլերան, ինչպէս հաղորդել էինք, մեծ վնաս է հասցնում մի խոշոր արդիւնաբերութեան. քարածուխի մի քանի խոշոր ֆիրմաներ հրաժարվում են ապրանքի խոստացած քանակը ներկայացնելուց՝ բանւորները հանքերից փախչելու պատճառով։ Նոյն պատճառը ստիպում է հարաւի հանքերի ներկայացուցիչ Պետական Խորհրդի անդամ Աւդակօվին շատ յոռետես լինել, եթէ ախտի առաջը շուտով չառնվի։

—

4 օգոստոսի

Պետերբուրգ.—Մի օրվայ ընթացքում մայրաքաղաքում խօլերայով հիւանդացել են 54, մեռել 25, բժշկվում են 791 հոգի։

Խօլերայի դէմ կռւող յանձնաժողովի կարգադրութեամբ, խօլերայի և կողմից անբարեյոյս են ճանաչվում Երևանի և Քութայիսի նահանգները, Մօսկվա, Վօլօգդա, Վիննիցա և Կարս քաղաքները։ Պետ. Հեռ. Գործակալութիւնը ստացել է հետևեալ տեղեկութիւնները խօլերայի ընթացքի մասին։

Պօլտավեան նահանգում մի շաբաթվայ ընթացքում հիւանդացել են 454 և մեռել 181 հոգի. Պերմում հիւանդացել են 5, մեռել 12. Չերնիգօվեան նահանգում համաճարակի սկզբից մինչև օրս հիւանդացել են 1552, մեռել 601 հոգի։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Թագաւոր Կայսրը ամենաողորմածաբար բարեհաճել է Շամախու հայ լուսաւորչական թեմի առաջնորդ Անանիա արքեպ. Համազասպեանին իր եռանդուն ծառայութեան համար յուլիսի 30-ին շնորհել ս. Վլադիմիրի 3-րդ աստիճանը։

◆ Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար Ալ. Խատիսեանը հեռագրով դիմել է Նօվօրօսիյսկի, Փօթիի և Բաթումի քաղաքագլուխներին, խնդրելով հաղորդել թէ ինչ միջոցներ են ձեռք առել այդ քաղաքները ժանտախտի ներմուծման և կամ համաճարակի զարգացման դէմ։

Փօթիի քաղաքագլուխը հետևեալ պատասխանն է ուղարկել Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնավար Ա. Ի. Խատիսեանի հեռագրին. «Քաղաքային վարչութիւնը վաղուց է մշակել գործադրելիք միջոցների ուրուագիծը և ծախքերի նախահաշիւը Փօթի քաղաքի և իր նաւահանգստի վրայով ժանտախտը ներմուծելու ու տարածելու առաջն առնելու նպատակով։ Սակայն մեր քաղաքի սուղ միջոցները, որը, ինչպէս միշտ, այս տարի էլ նեղվում է քրօնիկական դէֆիցիտներից և բծաւոր տիֆի ու խօլերայի համաճարակի դէմ կռւելու համար ահագին ծախքերի տակ է ընկել, չէ բաւականացնում նոյնիսկ նախնական միջոցների գործադրութեան համար։ 1909 թւի մայիսի 24-ի օրէնքով սահմանված կէս կօպէկի տուրքը, որ գանձվում է Փօթիի նաւահանգստից անցնող ապրանքներից և մասամբ էլ նախասահմանված է նաւահանգստի սանիտարական պահպանութեան համար, մինչև այժմ էլ ի կատար չէ ածված։ Քաղաքի վարկային ոյժը սպառված է, բծաւոր տիֆի և խօլերայի դէմ մաքառելու նպատակով նպաստ կամ օժանդակութիւն ստանալու մասին յարուցված միջնորդութիւնները մնացել են անհետևանք։ Առևտրի մինիստրութիւնը հասել է այն աստիճանին, որ պատասխանում է, թէ խօլերայի դէմ կռւելու նպաստ բաց թողնելը օրէնքով նախատեսված չէ։ Այդ պատճառով երէկ Փօթիի դուման նորից միջնորդութիւն յարուցեց նպաստ կամ օժանդակութիւն ստանալու մասին՝ խնդրելով մերժելու դէպքում գոնէ թոյլ տալ քաղաքային ազատ հողերը գրաւ դնելու։ Այդպիսի պարագաներում, եթէ Անդրկովկասը և Թիֆլիս քաղաքը յոյս ունեն, որ Փօթի քաղաքը կը պաշտպանէ նրանց ժանտախտի ներմուծումից, չարաչար սխալված կը լինեն։ Քաղաքագլուխ Նիկօլաձէ»։

◆ Ի նկատի առնելով, որ Թիֆլիսի քաղաքային տարրական դպրոցներում առաջիկայ ուսումնական տարվանից բացվում են նոր բաժանմունքներ, ներկայումս նոյն դպրոցներում բացվում են նաև ուսուցչական հինգ ազատ տեղեր. երկուսը՝ վրացական, երկուսը՝ հայկական և մէկը ռուսական բաժանմունքների համար։ Այդ պաշտօնների համար մինչև այժմս տրված են 50 խնդիրներ։ Վարժուհիների վերջնական ընտրութիւնը յետաձգված է մինչև օգոստոսի 20-ը։

◆ Քաղաքային վարչութիւնը որոշել է ջրանցք տանել Ախալշէնի գիւղը (300 տընից բաղկացած), վերջիններիս խնդիրքով, որովհետև նրանք գործ են ածում ջրհորի ջուր։ Ջրանցքը նախահաշւի համաձայն կարժենայ 4500 րուբլի, որից 1500-ը միայն վճարելու են գիւղացիները, իսկ մնացեալը Թիֆլիս քաղաքի հաշւով։

◆ Թիֆլիսի փուռերի հացթուխները խնդիրքով դիմել են նահանգապետին, ուր գրաւոր փաստերով ապացուցանում են, որ հացի ա. և բ. տեսակների վաճառումը ներկայ սակագնով իրանց համար վնասակար է։ Նահանգապետը, այդ խնդիրքը ուղարկելով քաղաքային վարչութեանը, առաջարկել է ստուգել առաջ բերված փաստերը, որոնք, խնդրատուների կարծիքով, կարող են հիմք ծառայել յիշեալ տեսակների հացի սակագինը բարձրացնելու։

◆ Որովհետև քաղաքներից շատերը դիմումն են արել ներքին գործերի մինիստրութեանը՝ խնդրելով ազատել իրանց ստտրկանութեան պահպանութեան ծախքերից, ուստի Թիֆլիսի նահանգապետը, ներքին գործերի մինիստրութեան պահանջի համաձայն, առաջարկել է Թիֆլիսի քաղաքագլխին և Թիֆլիսի նահանգի միւս քաղաքների աւագներին՝ շտապով ներկայացնել տեղեկութիւններ՝ 1909 թւականին քաղաքային ոստիկանութեան համար քաղաքների կատարած ծախքերի մասին։

---

*) Տես «Մշակ» 1910 թ. №№ 64, 65, 66. 67. «Օտարախօս հայ ծխական դպրոցներ» վերնագիր կրող յօդուածը։ Ար. Ստ.

*) Ibid.

◆ Հանգուցեալ քաղաքագլուխ Վ. Ն. Չերքեզովի մահվան առիթով, Պետական Դումայի նախկին անդամ, այժմ աքսորական Իսիդոր Րամիշվիլին «Ախալի Դղա» վրաց թերթի միջոցով իր խորին ցաւակցութիւնն է յայտնում հանգուցեալի ընտանիքին։

◆ Թիֆլիսի քաղաքային ուսումնարանական յանձնաժողովը աւարտել է քաղաքային դպրոցների նախահաշւի կազմութիւնը 1911 թւականի համար և ներկայացրել դումային։ Այդ նախահաշւով յատկացվում է՝ քաղաքային տարրական տղայոց դպրոցների ծառայողների կազմի վարձատրութեան համար 81,332 ր. 33 կ., իսկ տնտեսական ծախքերի համար՝ 59,197 ր., նոյն տեսակի աղջկանց երկու դպրոցի ծառայողների վարձատրութեան համար 9587 ր. 50 կ. և տնտեսական ծախքի՝ 5912 ր.։ Քաղաքային արհեստաւորաց դպրոցի ծառայողների կազմի համար վարձատրութիւն՝ 24,610 ր., տնտեսական ծախքի՝ 20,905 ր. և նիւթեր ձեռք բերելու նպատակով՝ 3000 րուբլի։ Քաղաքային կանանց արհեստաւորաց արհեստանոցի ծառայողների կազմի համար՝ 7495 ր. և տնտեսական ծախքերի՝ 4626 ր.։

◆ Քաղաքային անշարժ կայքերի գնահատական յանձնաժողովը արդէն 3-րդ օրն է, որ 10-րդ քաղաքամասի զանազան կէտերում կատարում է փորձնական գնահատումներ։

◆ Թիֆլիսի ուղղափառների սինօդական գրասենեակը, գործերի շատութեան պատճառով, վերջերս անընդհատ գումարում է իր հերթական նիստերը։

◆ Քաղաքային ժողովրդական Զուբալովի անուան տանը կիրակի օրերը կարդացվելու են դասախօսութիւններ խոլերայի մասին ռուսերէն, վրացերէն, հայերէն և թուրքերէն լեզուներով։ Առաջին դասախօսութիւնը ռուսերէն լեզուով կը կարդայ բժ. Ա. Ր. Ֆիշեր օգոստոսի 8-ին, կիրակի օր։ Դասախօսութեան սկիզբն է ցերեկվայ ժամը 11-ին։ Մուտքը ձրի է։

◆ Մեզ հաղորդում են, որ Ալէքսանդրոպոլի քաղաքային խորհրդի մի խումբ ձայնաւորների շրջանում միտք է յղացել՝ ներկայիս բաց մնացած քաղաքագլխի պաշտօնը առաջարկել Թիֆլիսի քաղաքային խորհրդի նախկին իրաւատու և անուանի հասարակական գործիչ Արշակ Սերգէեվիչ Բաբեանին, որպիսի մտքով էլ նրանք դիմել են նրան հեռագրով, որպէսզի համաձայնութիւն տայ իր թեկնածութիւնը դնելու։

◆ Օգոստոսի 3-ին Թելաւում ձերբակալվել է Ջէմօխօղաշէնի գիւղի քահանայ Նէստոր Սիդամոնիձէն, որին արդէն բանտարկել են։ Բանտարկութեան պատճառները անյայտ են։

◆ Շուշից մեզ գրում են. «Յունիսի 20-ից սկսած մինչև օգոստոսի 1-ը ոստիկանութիւնը զինուորների օգնութեամբ 3 անգամ շուրջկալ է կատարել և ամեն անգամ ձերբակալել է 200—300 հոգու. բոլոր ձերբակալվածները, մի շատ աննշան բացառութեամբ, ազատ են թողնվել։ Մի քանի հոգու էլ էտապով ուղարկել են իրանց հայրենիքը՝ անցագիր չունենալու պատճառով։ Վերջին շուրջկալը եղել է յուլիսի 30-ին»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Օգոստոսի 4-ին, գիշերվայ ժամը 11¹/₂-ին, Նիկօլայեվսկայա փողոցի № 60 տան մէջ ապրող Նիկօլայ Մօտէնցը մտնելով տան դարպասին՝ սկսում է զանգահարել, որպէսզի դռնապանը գայ դուռը բանալու։ Այդ միջոցին ինչ-որ մի անյայտ անձնաւորութիւն մօտ է վազում և դանակի հարուածներով վէրքեր է հասցնում նրան ետևից՝ գլխի ու պարանոցի մասերից։ Մօտէնցը պաշտպանվելով դանակի հարուածներից, վիրաւորում է ձեռքը։ Չարագործը, տեսնելով որ չէ կարող յաղթել Մօտէնցին, թողնում է նրան ու փախչում Նիկօլայեվսկայա փողոցով։ Մօտէնցի աղմուկից շտապում է դէպքի տեղը գօրօդօվօյը և կանգնելու նախազգուշացում անելուց յետոյ՝ բերդան հրացանը պարպում է անհնազանդ փախչողի ետևից. գնդակը վրիպում է թէև, բայց յանցաւորը վայր է ընկնում ու գօրօդօվօյը հնարաւորութիւն է ունենում կալանաւորելու նրան։ Պարզվում է, որ նա Դուշէթի գաւառի Բուրիանի գիւղի բնակիչ Գէօրգի Գէօրգիէվիչ Արաբուլին է 21 տարեկան, ապրում է Մօլօկանսկայա փողոցում № 14 տան մէջ Զիչինաձէի ճաշարանում սպասաւորի պաշտօնով։ Արաբուլինը գետին ընկնելիս վիրաւորել է աջ ձեռքի ճկոյթ մատը և ջարդել կուռը. դրանով էլ ճանաչվել է։ Մօտէնցին և Արաբուլինին ուղարկել են Միքայէլեան հիւանդանոցը, ուր բժշկական օգնութիւն հասցնելուց յետոյ Մօտէնցին բաց են թողել տուն գնալու, իսկ Արաբուլինին տարել են ոստիկանատուն։ Մահափորձի շարժառիթը առայժմ պարզված չէ։

◆ Օգոստոսի 4-ին, ցերեկվայ ժամը 1-ի մօտերը, Ֆօմինսկայա փողոցում անյայտ պատճառներից հրդեհ է ծագել № 3 տանը, որ պատկանում է Նիկօլայ Պաւլօվիչ Փիրումօվին։ Հրդեհը հանգցրել են հրդեհաշէջները։ Վնասը հասնում է 1000 ր.։ Տունը ապահովագրված է 5000 րուբլով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Արտաթումանից մեզ գրում են. «Յուլիսի 28-ին տեղումս կայացաւ հայ ջութակահար Դաւիթ Դաւթեանի նուագահանդէսը, մասնակցութեամբ օր. օր. Արամակլիսեանների։ Հասարակութիւնը, որը շատ ժամանակից ի վեր հնարաւորութիւնից զուրկ էր տաղանդաւոր ջութակահարին լսելու, շնորհիւ նրա Թուրքիա անցած լինելուն, հոծ բազմութեամբ լցրել էր թատրոնի դահլիճը։ Դ. Դաւթեանը մեծ աջողութեամբ նուագեց Paganini-ի «Concerto»-ն, Wieniawski»-ի «Polonaise Brillante»-ը և Schumann-ի «Reve d'enfante»-ը՝ արժանանալով բուռն ծափերի։

«Ծրագրից դուրս արտիստը bis-երին նուագեց մի քանի կտորներ ևս։ Օր. Արամակլիսեաններից մէկը աջող կերպով ներդաշնակեց ջութակահարին, իսկ միւսը իր դուրեկան ձայնով երգեց մի քանի երգեր ու ռոմանսներ։ Երկուսն էլ bis երին կատարեցին մի քանի կտորներ ևս, և ծափահարվեցին։

«Ինչպէս մենք լսեցինք, Դաւիթ Դաւթեանը այս օրերս Թիֆլիսի վրայով կանցնի Կ. Պօլիս, ուր սեպտեմբերի մէկից մտադիր է երաժշտական մի դպրոց (Ecole de Musique) բանալ»։

—

Ջալալ-Օղլի, 2 օգոստոսի

Երէկ, ամսիս 1-ին, կիրակի երեկոյեան, տ. Վ. Մամուլեանի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ մի ներկայացում՝ յօգուտ Թիֆլիսի Հայոց Դրամատիկական Ընկերութեան։ Խաղացին Կարէևի «Զարզուշակ (օրհասական) եալլ» 3 գործողութեամբ դրաման հայերէն և Մամօնտօվի «Նորին գերազանցութեան այցելութիւնը» 1 գործողութեամբ վօդեվիլը ռուսերէն. առաջինը մասնակցութեամբ տ. Մամուլեանի, դերասան Լ. Ալլահվերդեանի և տեղական ու եկւոր սիրողների, իսկ վերջինը՝ հայ և ռուս սիրողների։

Դերակատարներից լաւ էին՝ դրամայի մէջ—տ. Մամուլեան (Վարվարա Միխայլօվա), որ թէև առաջին երկու գործողութեան մէջ մի փոքր սառն էր, բայց վերջինում՝ մտնելով իր դերի մէջ, մեծ տպաւորութիւն գործեց հանդիսականների վրա իր արտայայտիչ և յուզումնալից խաղով, կորզելով արցունքներ շատերի աչքերից. ապա՝ դերասան Ալլահվերդեան (Նիկօլայ Բալօվին) իր տիպիկ խաղով, տիկ. Ա. Քանանեան (Պէչօրինա), Ե. Յարութիւնեան (Բօրօդին), որպէս սկսնակ սիրող, իր հրաշալի խաղով և բեմական ձայնով կատարած երգեցողութեամբ (ներկայացման ժամանակ դերի պահանջմամբ երգեց մի քանի անգամ «Միայն քեզ համար...»), որին քիչ չէր նպաստում և իր բեմական արտաքինը, և յետոյ՝ օր. Ս. Ստեփանեան (Նատաշա), իսկ մնացածները թոյլ էին և կենդանութիւնից զուրկ, որպէս մանրկէն. բացի դրանից՝ մինչև իսկ լաւ չէին սովորել իրանց դերերը, կմկմում էին և շուտ-շուտ յուշարարին նայում։

Գալով վօդեվիլին, որ այնքան էլ չէ պարունակում բարոյակրթիչ գաղափար, շատ աշխոյժ անցաւ և բաւական զուարճացրեց հանդիսականներին՝ շնորհիւ բոլոր դերակատարների, այն է՝ Нератовъ-ի (Добряковъ), տիկ. Кирпа-ի (Зарѣцкая), Ե. Յարութիւնեանի (Владимиръ Николаевичъ) և Յ. Յակովլեանի (Гапкинъ-деньщикъ). Պէտք է նկատել, որ վօդեվիլի մէջ Յարութիւնեանը չէր կարողանում պահել իր ծիծաղը։

Խաղամիջոցներին նուագում էին զուռնա։ Ներկայացման վերջը օր. Ս. Ստեփանեանը դուրեկան ձայնով և զգացված երգեց «Մի լար, բլբուլ» և «Ахъ, зачѣмъ эта ночь», իսկ դեր. Ալլահվերդեանը զուռնայի նուագածութեամբ արտասանեց մի քանի անմիտ և անտեղի կուպլետներ, որոնցից մի քանիսը ինքն էր հնարել և որոնք զուրկ էին անգամ տաղաչափութիւնից։ Դպրոցի դահլիճը ծայրից ծայր լիքն էր հանդիսականներով, որոնք բուռն ծափահարութիւններով վարձատրում էին աչքի ընկնող դերակատարներին, այն է՝ տիկ. Մամուլեանին, դեր. Ալլահվերդեանին, Յարութիւնեանին և ռուս սիրողներին (պ. Нератовъ և տիկ. Кирпа). տիկ. Մամուլեանին նուիրեցին մի ծաղկեփունջ։

Հանդիսականների մէջ կարգապահութիւնը բացակայում էր՝ թէ տեղերի գրաւելով և թէ վերջին շարքերում լսվող, որպէս ուրախութեան արտայայտութիւն, սուլոցներով։

Տոմսակների գները թանգ էին՝ 1 ր. 50 կ.—30 կ.։ Կար բուֆէտ, ուր նոյնպէս գները թանգ էին։

Զուտ արդիւնքն է մօտ 200 րուբլի։

Գալով ներկայացման նպատակին՝ իմ կարծիքով աւելի լաւ էր ներկայացումը կազմակերպել յօգուտ դպրոցի, որ թէև արտաքուստ գեղեցիկ է, բայց, ահա քանի տարի է, ներքուստ ներկայացնում է մի կատարեալ խոզանոց՝ իր հողէ և շարժական տախտակների յատակներով ու վերին աստիճանի անբարեկարգ վիճակով և որը պատիւ չէ բերում Ջալալ-Օղլու հայ հասարակութեանը։ Հակառակ դէպքում արդիւնքը կարելի էր նուիրել տեղական բեմի զարգացմանը։

Խ. Բաբայեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 5 օգոստոսի

«Խաթաբալա» երգիծաբանական թերթը չըմբռնելով երգիծաբանութեան էութիւնը, տարիների ընթացքում իր տափակ սրախօսութիւններով «զբաղեցրել» է հայ հասարակութեանը։ Այժմ միանգամայն թափ տալով իր «երգիծաբանական» ամբողջ պաշարը, «երգիծանքի» նիւթ է դարձնում հասարակական մի այլ դաս՝ հայ ուսուցչութիւնը։

«Խաթաբալայի» վերջին համարները լի են հայ ուսուցչին ժողովրդի աչքում վարկաբեկ անող մի շարք ցինիկ կտորներով։

Մենք մի խումբ ուսուցիչներ՝ ցանկանալով որ նա օր առաջ վերջ տայ իր սանձարձակութեանը՝ սրանով յայտնում ենք մեր զայրոյթը վերոյիշեալ թերթին, որ օգտվելով ներկայ հանգամանքներից տքնում է անուանարկել հայ ուսուցչին։

Ստորագրութիւններ 34 ուսուցիչների

—

Շուշի, 30 յուլիսի

«Մշակի» № 161-ում Ոսկու-Զօնը «Շուշու թեմական դպրոցը» վերնագրով տալիս է այդ դպրոցի 1909—1910 թ. թ. ուսումն. տարվայ համառօտակի, բայց մօտաւոր պատկերը և ի միջի այլոց գրում է. «Բանից երևում է, որ հոգաբարձութեան նախագահ Եղիշէ վ. առանձին գրութեամբ յայտնած է եղել Վեհին հոգաբարձութեան ժամանակամիջոցը լրանալու մասին, և խնդրած Վեհի հաճութիւնը հոգաբարձութեան պաշտօնավարութեան մասին մինչև նոր ընտրութիւնները, և հայր նախագահը ստանում է Էջմիածնից ներկայ տարվայ մայիսի 26 ին, № 1433 գրութիւնը. «Դիւանը զեկուցանելով ազգիս Վեհափառ Հայրապետին ձեր՝ ամսիս 22-ի № 32 յայտարարութիւնը՝ ընդունեց բարձր հրաման յայտնել ձեզ, որ թեմ. հոգևոր դպրոցի հոգաբարձական ներկայ կազմը պէտք է շարունակէ իր պաշտօնը, հետևապէս և իր կարգադրութիւնն անէ մինչև նոր հոգաբարձական ընտրութիւնը և հաստատութիւնը»։

Նախ՝ Եղիշէ վարդապետին քաղաքացիների կողմից ընտրված անձինք ներկայանալով խնդրած էին դիմել Վեհին և յայտնել, որ հին հոգաբարձուների ժամանակամիջոցը լրացած լինելու պատճառով՝ թոյլ տայ նոր ընտրութիւններ անել, որի համար Եղիշէ վ. իր հաճութիւնը տալով և միամտացնելով քաղաքացիներին՝ ուրիշ կերպ է դիմում Վեհափառին։ Երկրորդ՝ ցանկալի էր իմանալ, թէ ինչու Եղիշէ վ. Վեհին ուղղած իր յայտարարութեան մէջ «հոգաբարձութիւն» գրելու ժամանակ չէ պարզել, որ նրա անուան տակ քմահաճօրէն գործողները միայն չորս հոգի են, որ ըստ օրինաց պէտք է լինէր առնուազը եօթը հոգի, և թէ ինչու Ոսկու-Զօնի տեսութիւնից խոյս է տուել Եղիշէ վարդապետի յայտարարութեան մթութիւնը։

Հոգաբարձութեան կազմից ըստ սովորութեան բացակայ էր Դ. Շահնազարեանցը իր անձնական գործերով։ Յայտնի հոգաբարձուները շատ լաւ իմանալով երկու հոգաբարձուների տրամադրութիւնը՝ յունիսի 19-ին հեռագրով հրաւիրում են Դ. Շահնազարեանցին գալ Շուշի, որը հեռագրով պատասխանում է՝ «գործ ունեմ, չեմ կարող»։ Ոսկու-Զօնը այս մերժողական հեռագրի համար, գուցէ և չիմանալով, գրում է. «27-ին Շահնազարեանցը գրաւոր իր հաճութիւնն է ցոյց տալիս հոգաբարձութեան՝ ուսուցչ. խումբը արձակելու»։ Բայց չէ՞ որ յունիսի 30-ի նիստում է եղել խումբը արձակելու կամ պահելու որոշումը. ապա որտեղից և ինչպէս կարողացաւ Շահնազարեանցը երեք օր առաջ, այսինքն յունիսի 27-ին, իմանալ ուսուցչ. խմբի արձակելու որոշումը, և գրաւոր իր հաճութիւնը տալ։

Պարզ է, որ յայտնի հոգաբարձուները Շահնազարեանցի մերժողական հեռագիրը ստանալուն պէս գրաւոր դիմել են նրան և նրա հաճութիւնը ձեռք բերել։ Ի հարկէ Շահնազարեանցը ստիպված էր այդ անել, քանի որ դպրոցի օգտին իրան յանձնված գումարը մինչև օրս չէ տալիս, առարկելով թէ «չունեմ, յետոյ կը տամ». քանի որ նոյն դպրոցի համար Բագու և Թիֆլիս ստորագրված և ապառիկ մնացած փողերը հաւաքելու համար հարիւրներով ճանապարհածախս և սուտօչնիներ է ստացել, չը նայելով որ իր անձնական գործով պէտք է գնար յիշեալ տեղերը։ Հոգաբարձուները նիստը բանալուց արձանագրութեան մէջ ինչ են գրել. ներկա՞յ էր Շահնազարեանց թէ՞ բացակայ։

Նիստի ժամանակ նախագահ Եղիշէ վ. ստացաւ մի ծրար։ Խնդրեցինք կարդալ։ Երևաց, որ քառասունից աւելի մեր քաղաքացի յարգելի անձինք առաջարկում են հոգաբարձութեան հին կազմին՝ յօգուտ դպրոցի և ժողովրդի խաղաղութեան՝ հեռանալ պաշտօնից, քանի որ իրանց ժամանակամիջոցն էլ լրացած է, և տեղիք տալ նոր ընտրութիւններ անելու։ Բալայեան և Անդրէաս-բէգ հոգաբարձուները բողոքը ստորագրողներին փողոցային սոսկ սրիկաներ կոչելով՝ թուղթը մի կողմն են ձգում։ Ես և Մինասբէգեան ասում ենք՝ «վայել չէ երբէք, մանաւանդ հոգաբարձութեան նիստի մէջ, այդպիսի անարգական խօսքեր շռայլել մեր պատուաւոր քաղաքացիների հասցէին, այլ ընդհակառակը բողոքը պէտք է լսել, արձանագրութեան մէջ մտցնել և թողնել առանց հետևանքի», և խնդրում ենք մեր այս ասածները արձանագրութեան մէջ մտցնել։ Բայց աղա-Անդրէասը, խլելով թուղթը Մինասբէգեանի ձեռքից, գոռաց. «Թուղթը իր ստորագրողներով արտաքնոց պէտք է մտցնել և ոչ թէ արձանագրութեան մէջ»։ Եղիշէ վ. բարձրանալով դուրս եկաւ ժողովից։ Մինասբէգեանը թքելով հեռացաւ։ Այնուհետև Անդրէաս-բէգը սկսեց ինձ վիրաւորել, որի համար ես գրաւոր բողոքելով հոգաբարձութեան՝ խնդրեցի բաւարարութիւն տալ ինձ և յանցաւորին նկատողութիւն անել։

Ոսկու-Զօնը յունիսի 30-ի նիստի համար գրում է. «Հայր նախագահը բանալով նիստը յայտարարում է օրակարգում նշանակված քննելիք հարցերը»։

Օրակարգի հարցերը որոշակի դրված չէին եղել։ Ըստ սովորութեան՝ նախընթաց ժողովում, այն է յունիսի 26-ին, արձանագրութիւնը կարդալուց, ես, նկատելով որ նրա մէջ չէ մտցված մեր վերև յիշածները, որոնք, ի հարկէ, կապ ունէին անցեալ նիստի հետ, նորից խնդրեցի արձանագրութեան մէջ մտցնել, բայց Եղիշէ վարդապետը, ինչպէս երևում է Ոսկու-Զօնի գրածից իմ բացակայելուց յետոյ ըստ իր արդարադատ հայեցողութեան համարելով ինձ միշտ խռովարար, գործին չը վերաբերող և անտեղի հարցերով և խնդիրներով կարգ խանգարող, զանազան խծբծանքներով զզւող՝ չէ բարեհաճել ուշադրութիւն դարձնել և յարգել իմ իրաւացի խնդիրը։ Եթէ արդարև վերոգրեալ ատտեստացիան իսկ Եղիշէ վարդապետի ինձ տուածն է, որով կուզէ բարոյապէս վարկաբեկել ինձ, ապա ինչպէս է թոյլ տալիս իրան արդարամիտ վարդապետը կասկածելի բարոյականութեան տէր քահանայի հետ միասին նստել պաշտօնավարել և նրա խորհուրդներով գործել։

Հոգաբարձու Անդրէաս-բէգը առանց հոգաբարձութեանը յայտնելու և դրամական հաշիւները յայտարարութեամբ հոգաբարձութեան ներկայացնելու՝ վեր է կենում գնում Բագու, և հոգաբարձութիւնը արձանագրութիւն է կազմում նրան խիստ նկատողութիւն անել։ Բացի այս, ահա երկու տարի է, որ հոգաբարձութիւնը երեք արձագրութիւններով պարտաւորեցրած է, որ հոգաբարձութեան վերաբերեալ մուտքի համար կվիտանցիօնի մատեան պահվի, որպէսզի հաշիւները աւելի պարզ և մաքուր լինեն, բայց մինչև օրս մնում է անկատար։ Նրա բացակայութեամբ ներկայացրին ժողովում ելմտից մատեանը ստորագրելու, բայց ես հարցրի՝ «ստուգված է»։ Բալայեանցը ասաց, թէ «ես ստուգել եմ փաստաթղթերով»։ Ես պատասխանեցի՝ «քանի որ, համաձայն արձանագրութեան պահանջի, կվիտանցիօնի կարգով չէ ստուգված, չեմ կարող ստորագրել», և այս իմ խօսքերը երկար նիւթ դառնալուց մի կերպ մտցրի արձանագրութեան մէջ։

Յունիս ամսի 26-ին հոգաբարձական նիստում պատահած անախորժութեան համար միւս օրը Մինասբէգեանցը իր հրաժարականն է ուղարկում, բայց Եղիշէ վարդապետը այդ՝ առանց հոգաբարձութեան ժողովին ներկայացնելու՝ մակագրութեամբ վերադարձնելով, խնդրում է գալ շարունակել իր պաշտօնը։ 30-ի նիստի ժամանակ հրաւիրաթղթով կանչում Մինասբէգեանցին, որը գրում է՝ «խնդրեմ ինձ ազատ համարել»։ Բայց անամօթաբար գրում են արձանագրութեան մէջ. «Մինասբէգեանը ըստ սովորութեան 30 ի նիստի ժամանակ բացակայ էր»։ Հարց՝ Դ. Շահնազարեան ներկա՞յ էր, չէ՞։

Ոսկու-Զօնը աւելի խոհեմութիւն արած կը լինէր՝ եթէ արդարութիւնը պարզելու համար գոնէ ըստ վարդապետի խռովարար և նիստերին իբր չը մասնակցող հոգաբարձուներին էլ մի անգամ խօսեցնէր և յետոյ գրէր վեր առնէր ու խնամու կողմը պահէր։

Որ մեր թեմական դպրոցների, մանաւանդ Ղարաբաղի դպրոցի գործերը տակն ու վրա են լինում շնորհիւ թայֆայականների, այս անուրանալի է. բայց թէ երբ ուշադրութիւն կը դարձնի Էջմիածնի կողմից և երբ արդարութիւնը կը բարձրացնէ իր կափահարված և կուրծքի վրա ձգած գլուխը՝ չը գիտենք։

Թեմական դպ. նախկին հոգաբարձու՝
Արշակ Մանկասարեան

ԵՒԼԱԽ-ՇՈՒՇԻ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՄԱՍԻՆ

Ինձ նման մի քանի արհեստաւոր և բանւոր մարդկանց հետ հաւաքված կարդում էինք «Մշակը», որ պատահեցինք Ա. Յովսէփեանցի Եւլախ-Շուշի երկաթուղու մասին գրածին և օրհնեցինք նրա կեանքը իր բարի խօսքի համար։

Մենք Սարուխանեանցին լաւ չենք ճանաչում, բայց ինչպէս երևում է, Յովսէփեանցը ճանաչում է և հաստատում, որ այդ մարդը բարի մարդ է և նրանից չէ կարելի վատութիւն սպասել, այլ նրա միտքը նա է, որ իր հայրենիքի համար մի ճանապարհ շինէ և ժողովրդին տանջանքից ազատէ։

Աստուած նրա կեանքն էլ օրհնէ, որ նա այդպէս բարերարութիւն է ուզում անել ժողովրդին։

Մենք էլ հասարակ ժողովրդի հարազատ զաւակներ ենք, և թէկուզ նամուսի խաթրի՝ պէտք է այդ գործին մասնակից լինենք, որ անպատճառ գլուխ գայ, և գոնէ, որ էլ ոչ մի բան չունենք, մի հայրենիքի ճանապարհ էլ է լինի մեզ։

Մեզ ակցիաներից եկած օգուտը հարկաւոր չէ, առանց նրան էլ շատ օգուտ պիտի ունենանք. օրինակ՝ ես 500 ր. եմ տուել, 10 հատ ակցիա վերցրել, և հաշւում եմ, թէ թող իմ 500 ր. կորչի, բայց դրա փոխարէն մի տարվայ իմ այգու բերքը իմ կորցրած փողը դուրս կը բերի և այնուհետև յաւիտենական եկամուտի աղբիւր կը դառնայ և այլ ևս այս Բագուի նաւթերում չեմ փտի։

Մեզանից ամեն մէկը պարտաւոր է՝ որքան կարողանայ՝ ակցիա վերցնել. չունեցողն էլ պէտք է մէկը վերցնի և հաշւի անի՝ թէ մի երկու ամիս պարապ է մնացել, կամ ինչպէս հին ժամանակ սովորութիւն է եղել՝ էշով գնացել են ձրի բան արել, մենք էլ հիմա էնպէս ենք անում։

Ահա այսպէս մտածում եմ ոչ միայն ես, այլ բոլոր իսկական հայ ժողովրդի արիւն ունեցողները, և այսպէս էլ գրում է Յովսէփեանցը, որը, ինչպէս երևում է, ժողովրդի բարին կամեցող մի մարդ է։

Սարուխանեանցը, ինչպէս ինքը գրում է և մենք էլ լսել ենք, մի քանի ֆիրմայի վրա 5—600,000 ր. փող է կորցրել և ոչ մի միջոցի չէ դիմել. մի՞թէ նրա աչքը մեր կոպէկների վրա է։ Նա իր նամակումը յիշել է, թէ ով որ ուզում է՝ թող դիմէ իրան, հարց տայ և բացատրութիւն ստանայ։ Իսկ «Գիւղացին» վեր է կենում «Մշակին» դիմում։ Դրանից ինչ է դուրս գալիս։ Մենք «Գիւղացու» նման մարդկանց լսելու ցանկութիւն չունենք։ Կէս միլիօն ժողովուրդը 10 տարուց աւելի աչք է տնկել և սպասում, հազիւ հազ գործը գլուխ է գալիս, այն էլ մարդիկ են գտնվում, որ խանգարում են։ Միևնոյն է, այսուհետև ով էլ որ ճանապարհը շինի՝ անունը Սարուխանեանցինը պէտք է լինի, որովհետև իսկական պատճառը այդ մարդն է։

Ցանկալի էր, որ Սարուխանեանցը ուշադրութիւն չը դարձնի «Գիւղացու» նման մարդկանց խօսքերին և էլի շարունակի ակցիաների համար ստորագրութիւնը, որովհետև ժողովրդից ցանկացող շատ կայ։ Նոյնպէս ցանկալի էր, որ Սարուխանեանցը «Մշակում» հրատարակել տար այն անձանց անունները, որոնք բաժնետէր են գրվում, որպէսզի այդպիսով ժողովուրդը իմանայ, թէ ով է ժողովրդի հոգսը քաշողը և բարի գործին մասնակցողը։

Մենք յոյս ունենք, որ հասարակ ժողովուրդը հարկաւոր գումարը կը լրացնի, իսկ, բան է, եթէ մի քառորդն էլ գոյանայ՝ էլի Սարուխանեանցը իր եռանդով գործը գլուխ կը բերի և այդ ճանապարհով կը գնան ու կը գան ինչպէս այդ գործին անկեղծ համակրողները, նոյնպէս և նրանք, որոնք ներկայ ձեռնարկութեանը հակառակ են։

Բալախանի — Դ. Դ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՕՆԳՐԷՍԸ ԲԵՐԼԻՆՈՒՄ

IV

Բեռլին, 7 օգոստոսի

Մաուրէնբրեխերից յետոյ խօսեց Օսնաբրիւկի պաստոր Պֆաննկուխէն «Հնարաւո՞ր է քրիստոնէական սօցիալիզմ» նիւթի վրա։ Նա եկաւ այն եզրակացութեան, որ քրիստոնէութիւնն ու սօցիալիզմը տարբեր բաներ են։ Քրիստոնեան կարող է սօցիալիստ լինել, բայց այդ անհրաժեշտ պայման չէ քրիստոնեայ լինելու համար, ինչպէս որ ընդհակառակը՝ սօցիալիստն էլ կարող է քրիստոնեայ լինել, բայց կարող է նաև չը լինել։ Հարկաւոր է միայն միմեանց հասկանալ և համոզմունքով բան անել։ Միայն այն է մեղք, ինչ որ հաւատով ու համոզմունքով չէ կատարվում, այլ տարբեր շարժառիթներ ունի։

Նրանից յետոյ ամբիոն բարձրացաւ Լայպցիգին մօտիկ մի աւանի պաստորը՝ Գօտտֆրիդ Նաումանը (չը շփոթել յայտնի Ֆրիդրիխ Նաումանի հետ, որ գերմանական րայխստագի անդամ է)՝ խօսելու սօցիալիստների հետ ունեցած վիճաբանական երեկոների մասին և տեղեկացնելու կօնգրէսի անդամներին այն աջողութիւնների ու դժուարութիւնների մասին, որ ունի այդ գործը։ Սօցիալ-դեմօկրատների կարծիքով եկեղեցին պետութեանը ծառայող մի հաստատութիւն է, որի նպատակն է մարդկանց բթացնել, յիմարացնել և յետ պահել առաջդիմութիւնից, իսկ հոգևորականները սև-պօլիցիականներ են։ Այդպիսի թիւրիմացութիւնների դէմ կռւելու և ուղիղ գաղափարներ տարածելու համար է, որ շատ տեղերում կազմվել են վիճաբանական երեկոներ սօցիալիստների հետ, և չէ կարելի ասել, թէ նրանք բոլորովին անաջող են անցել, թէև առայժմ աջողութիւնը տեսանելի չէ։ Ճշմարտութիւնը սերմանվում է, որ յետոյ՝ ժամանակին բարի պտուղ տայ։ Որովհետև այս նոյն խնդրի մասին ես ուրիշ առիթով արդէն գրել եմ «Մշակին» (Աւետարանական - սօցիալական կօնգրէս), այդ պատճառով աւելորդ եմ համարում կրկին մանրամասնութիւնների մէջ մտնել։

Վերջին խօսքը պատկանում էր Դորտմունդի այնքան թշնամանքների առարկայ դարձած և պահպանողականների կողմից սաստիկ հալածված պաստոր Գօտտֆրիդ Տրաուբին, որ կրօնական սրբազան օգևորութեամբ լի մատնացոյց արեց այն բոլոր դժուարութիւնների վրա, որոնք կան մեր առաջ, և ցոյց տուեց, թէ որն է մեր սօցիալական պարտաւորութիւնը, մի տեսակ ամփոփելով ամբողջ երեկոյեան ճառախօսութեան արդիւնքը։ Մանրամասն մէջ բերել նրա խօսածը շատ դժուար է զգացմունքների և մտքերի առատութեան պատճառով։ Դրա համար էլ առ այժմ թողնում եմ այդ, խոստանալով «Մշակի» ընթերցողներին ծանօթացնել նրա մտքերի հետ, երբ կօնգրէսի տպած արձանագրութիւնը ձեռքիս կը լինի, ուրեմն մի երկու շաբաթից յետոյ՝ Կովկասում։ Յամենայն դէպս աւելի լաւ վերջաւորութիւն և ամփոփում տալ անկարելի էր, քան թէ տուեց Տրաուբը, որի համար և աղմկալից ծափահարութիւններով վարձատրվեց ամբողջ մեծ դահլիճը լցված ունկնդիրների կողմից, որոնց թիւը հազարից անց էր։

—

բ) Նոյն երեկոյեան միւս ճիւղերը

Որովհետև վերև նկարագրած նիւթը գրաւել էր կօնգրէսին ներկայ եղողների բազմութեան ³/₄ մասը, միւս երեք ժողովները համեմատաբար շատ քիչ ունկնդիրներ ունէին։ Այդպէս օրինակ «կին և կրօն» նիւթի դասախօսութիւններին ներկայ էին համարեա միայն կանայք, և խօսողներն էլ բացառապէս կանայք էին։ Նրանք քրիստոնէութիւնը համարում են իրանց փրկիչն ու առաջդիմելու հնարաւորութիւն տուողը. դրա համար էլ կանանց թշնամիները միևնոյն ժամանակ քրիստոնէութեան թշնամիներն են։ Պօղոս առաքեալի և Քրիստոսի խօսքերը լաւ չըմբռնելու պատճառով քրիստոնեաներն սկսել են արհամարհել կնոջը, որ երկար ժամանակ տիրող լինելով քրիստոնէութեան մէջ՝ շատ մեծ վնաս է հասցրել թէ կանանց շարժմանը, թէ քրիստոնէութեանն իրան։ Այժմ պէտք է կանանց շարժումը քրիստոնէութեան հետ ձեռք ձեռքի տուած գործի, որպէսզի կարողանայ աջողութիւն ձեռք բերել՝ իբրև մարդկութեանը ծառայող մի ֆակտոր։ Կանանց շարժման հիմնական պահանջների իրագործումը հաւասարազօր կը լինի մի սօցիալական յեղափոխութեան։ Կանայք ամեն կերպով պիտի աշխատեն ազդեցութիւն ձեռք բերել, երեխաներին պէտք է քրիստոնէական հոգով դաստիարակեն, օրիորդաց դըպրոցներում կրօնի դասերը աստուածաբանութիւն սովորած կանանց պէտք է յանձնել բացառապէս, որ ցանկալի ուղղութեամբ գործն առաջ տանեն։ Կանայք պէտք է նաև համայնքի մէջ անկախ պաշտօններ ձեռք բերելու իրաւունք ունենան։ Ապա մի ամերիկուհի, որ պաստորի պաշտօն ունի, պահանջում է, որ կանանց ամեն տեղ իրաւունք տան տղամարդկանց հաւասար քարոզչական պաշտօն կատարելու։ Քրիստոնէութեան մէջ խտրութիւն չէ կարող լինել տղամարդու և կնոջ միջև։ Երկուսը միասին միայն կարող են աւետարանը ճշդութեամբ հասկանալ։ Ամերիկայում մի շրջաբերական հարց է ուղղվել համայնքներին, և շատ համայնքներ ցանկութիւն են յայտնել կին պաստոր ունենալու։ Կին պաստորները իրանց գործը շատ լաւ առաջ են տանում և որոշ բաներում աւելի ձեռնհաս են, քան թէ տղամարդիկ։

«Կրօն և չափաւորութիւն» ժողովում յատկապէս շեշտվել է ալկօհօլի վնասակարութիւնը և կրօնական պարտաւորութիւն է համարվել նրանից հեռու մնալ, որովհետև նա վնասում է բոլոր բարոյական հաստատութիւններին՝ ընտանիքին, բարեկամութեանը, սօցիալական և հասարակական գործունէութեանը և այլն, ամբողջ ազգերի այլասերման և ոչնչացման հիմնական պատճառն է և այլն և այլն։ Այդ բոլոր պատճառները պահանջում են քրիստոնեայից՝ բոլոր ոյժով կռիւ մղել ալկօհօլի ազդեցութեան և տարածման դէմ և աշխատել, որքան կարելի է, նրա զօրութիւնը թուլացնել։

«Կրօն և խաղաղութիւն» ժողովում զբաղվել են գլխաւորապէս Գերմանիայի և Ֆրանսիայի, նաև Գերմանիայի և Անգլիայի յարաբերութիւններով և ցոյց են տուել, որ գերմանացիք խաղաղ են տրամադրված դէպի իրանց բոլոր հարևանները, իսկ ֆրանսիացիների մէջ հետզհետէ կորչում է վրէժխնդրութեան ոգին 1870—1871-ի պատերազմի համար։ Անվիճելի և բոլորի կողմից ընդունված սկզբունք է, որ անհատը անհատի դէմ կռիւ չը պէտք է մղէ։ Քրիստոնէութեան նպատակն է ամեն կերպով ձգտել, որ այդ սկզբունքը անվիճելի կերպով ընդունելի դառնայ նաև պետութիւնների յարաբերութեան մէջ։

Բոլոր 4 ժողովներն էլ վերջացան ժամը 12-ից բաւական անց։

Հետևեալ օրը՝ այսօր, կիրակի լինելով, ճաշից առաջ ոչ մի պարապմունք չը կար։ Ճաշից յետոյ նշանակված էր ժամերգութիւն և 3 լեզուով քարոզ։ Իսկ երեկոյեան ժամը 8-ից սկսվեցին երեք մեծ՝ ժողովրդի համար պատրաստված ժողովները, ինչպէս Գերմանիայում սովորութիւն է այդպիսի դէպքերում, նաև հասարակ դասակարգին ծանօթացնելու կօնգրէսի ծրագրի և նպատակների հետ։ Խօսք եղաւ գլխաւորապէս բանւորների եկեղեցուց բաժանվելու մասին, թէ ինչպիսի կերպարանք ունի քրիստոնէութիւնը մեծ քաղաքներում և այլն։

Երուանդ Տէր-Մինասեանց
(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 31 յուլիսի

Յաճախ առիթ ենք ունեցել գրելու «Մշակի» էջերում, որ սահմանադրութիւնը չը բերեց Պարսկաստանին սպասված բարօրութիւնը. դրա պատճառները զանազան են. սակայն տիրող անկարգութիւնների գլխաւոր շարժառիթն համարվում է այն, որ երկիրը, աւելի ճիշդ՝ պարսիկ ազգաբնակութիւնը, ապրելով դարերի ընթացքում խորը տգիտութեան և ստրկութեան մէջ, Թուրքերով ձեռք բերած ազատութեան օրերում հանդէս է գալիս սանձարձակ և անընդունակ՝ փոխարէն որ լինէր կարգապահ օրէնքի առաջ և ցոյց տար խոհեմ վարմունք և գիտակից ժեստեր ժամանակակից քաղաքական կեանքում։ Ասածիս ապացոյց՝ այն հանգամանքը, որ ամեն պարսիկ քաղաքացի թէ գիւղացի, մուջահիդ թէ մօլլա, հրացանը ուսին, փամփուշտները մէջքին շարած թափառում է համարձակ ուր որ ուզենայ, անում է՝ ինչ որ կամենայ։ Գէթ կառավարութեան այլևայլ ժամանակներում արած փորձերը, ոչ զինւորական դասակարգին զինաթափ անելու մտքով, աջողութիւն չէին ունեցել, մինչև որ առաջ եկան Թէհրանի վերջին ընդհարումները։ Ատրպատականում նոյնպէս մինչև այսօր անպտուղ են անցել զինաթափ անելու ձեռնարկութիւնները։

Մայրաքաղաքում նոր չէ, որ գոյութիւն ունի սահմանադրականների մէջ երկու կուսակցութիւն, որոնք են մուջահիդների կուսակցութիւնը՝ իրա գլուխ ունենալով Սաթթար և Բաղըր խաները, և մի քանի սարդար ու սալարներ, որոնք՝ իբրև թէ գործակցողներ ազատութեան գործին՝ անսահման պահանջներ են արտայայտում ու իրանց համարում բարձր ամեն մի պատասխանատւութիւնից։ Երկրորդ կուսակցութիւնն է սահմանադրական-կառավարականները, որոնք աւելի հետամուտ են մի կերպ վարել պետութեան ղեկը, բաժանված լինելով միևնոյն ժամանակ իրանց մէջ այլ և այլ կուսակցութիւնների՝ ազատականների, չափաւորների, շարիաթականների և այլն։ Յայտնի մուշտէիդ սէիդ Աբդուլլահի սպանութիւնից յետոյ կուսակցութիւններն աւելի ու աւելի շերտաւորվեցին և բէլիէֆ կերպով ասպարեզ եկան։

Այս վերջին շաբաթներում Թէհրանում հրատարակվող «Պօլիսը Իրան» պարսկերէն օրաթերթում տպված էր Սաթթար և Բաղըր խաների, Մօիզը-Սուլթանի և առհասարակ մուջահիդների կուսակցութեան հռչակագրի պատճէնը, որով նրանք խոստանում են հաւատարիմ մնալ սահմանադրութեանը և շարիաթին ու պաշտպանել հայրենիքը իւրաքանչիւր վտանգի դիմաց։ Մուջահիդ հայրենասէրների միութեան նման դաշնակցական քայլը շատ էլ դուրեկան չէր կառավարականների համար, մանաւանդ անախորժութիւնը կառավարականների մասին շօշափելի դարձաւ, երբ Թէհրանի փողոցներում մուջահիդների կողմից օրը ցերեկով սպանվեցին յեղափոխականներ, որոնց մէջ նաև Ալի Մօհամմէդ խանը՝ Թաղի-զադէի ազգականը։ Ցիշեալ ակնյայտնի տերրօրները համարվելով նշան հակամարտ ընդհարումների, մէջլիսը որոշում է զինաթափութեան հարցը և յայտարարում հասարակութեան։ Մուջահիդները, թւով 800 հոգի, Սաթթար, Բաղըր և այլ խաների հետ խմբված են նախանցեալ տարի ողբալի մահով մեռած Աթաբէկի պարկում։ Մէջլիսի կողմից պատգամաւորի դիմում անելու վրա ի սկզբան Սաթթար խանը և համագործակիցները համաձայնում են զինաթափ լինել։ Վրա են հասնում գիլանցի և ուրիշ մուջահիդներ, բողոքում են այդ կարգադրութեան դէմ հազար ու մի առարկութիւններով և համոզում սարդարներին, որ զէնքերը չը յանձնեն. ու այդպէս էլ վճռում են անել սարդարները՝ միաժամանակ ջինելով նաև դիրքեր պարկում։

Յուլիսի 25-ին հարցն ստանում է սուր կերպարանք։ Ոչ մի օգուտ չէ բերում գերմանական և իտալական դեսպանների միջամտութիւնը արիւնհեղութիւն չը կատարվելու համար. անօգուտ է լինում և՛ կառավարութեան վերջնագիրը. Սաթթարը և իւրայինները մնում են անդրդուելի։ Վերջապէս ցերեկվայ ժամը $2^1/_2$-ին սկսվում է ընդհարումը պետութեան կօզակների և մուջահիդների միջև և տևում մինչև գիշերվայ ժամը 10։ Մուջահիդները, չը դիմանալով զօրքերի թնդանօթներին և գոռ գրոհին, անձնատուր են լինում 350 մարդով և յանձնում զէնքերը։ Գիշերով մթին Մօիզը-Սուլթանին աջողվում է խոյս տալ. իսկ ծնկից վիրաւոր Սաթթար խանն ու Բաղըր խանը առաջնորդվում են Սամսամ-ուս-Սալթանէի տունը, որտեղ պահվում են հսկողութեան ներքոյ։ Երկու կողմից սպանված և վիրաւոր եղել են 40 հոգի։ Հետևեալ օրը, յուլիսի 26-ին, կարգը վերահաստատվում է, բազարները բացվում են և կեանքը փոքր առ փոքր մտնում է նորմալ վիճակի մէջ։

Այլ ընդ այլոյ լուրեր շատ կան Սաթթար և Բաղըր խաների համար. ոմանք ասում են, թէ կառավարութիւնը կախել է նրանց, ուրիշները՝ թէ բանտարկել, աքսորել և այլն. բայց այս լուրերը պիտի լսել վերապահութեամբ։ Ճշգրիտն այն է, որ Սաթթար խանը առաւելապէս ընդմիշտ կորցրեց իր անցեալ փառքը, որ շահել էր Թաւրիզի անցքերի ժամանակ. և դժուար թէ այսուհետև ներշնչէ Պարսկաստանին միևնոյն հմայքը՝ որ ունէր առաջ։

Սաթթարի պահանջմամբ մի քանի օր առաջ 70—80 հոգի իր մուջահիդներից ուղևորվեցին Թէհրան։ Կասկածներ կան, որ Սաթթարի դրութիւնը լսելուց յետոյ՝ ճանապարհներին յափշտակութեամբ պարապեն. այդ պատճառով ևս Թէհրան գնալու պատրաստ մի քանի հայ ընտանիք վախից յետ մնացին։

Յայտնի Թաղի-զադէն 4 օր առաջ հասաւ Թաւրիզ։

Հայկազուն

ՍՏՕԿՀՕԼՄԻ ԽԱՂԱՂ. ԿՕՆԳՐԷՍԸ

Ստօկհօլմի խաղաղութեան կօնգրէսը վերջացել է։ Ժողովներից ամենավերջինում հետևեալ միջադէպն է պատահել։ Եգիպտոսի նացիօնալիստների ղեկավար Ֆերիդ-բէյը, յարձակվելով անգլիական կառավարութեան վրա, առաջարկեց կօնգրէսին բողոքել Եգիպտոսում գործադրվող բրիտանական կառավարութեան քաղաքականութեան դէմ՝ դիմելով Եւրոպայի հասարակական կարծիքին։ Կօնգրէսի նախագահը ընդհատեց Ֆերիդ-բէյին, յայտնելով որ կօնգրէսի իրաւասութեան մէջ չէ մտնում եգիպտական և իռլանդական հարցերի քննութիւնը։ Այդ ժամանակ կօնգրէսի անդամների շարքերում խլրտում առաջացաւ։ Իշխ. Պ. Դ. Դօլգորուկօվը, մասնաւոր խօսակցութեան ժամանակ, յայտնեց, որ Անգլիայի կողմից Եգիպտոսում գործադրվող քաղաքականութիւնը պիտի քննութեան ենթարկվի, քանի որ քննութեան է ենթարկվել ֆինլանդական հարցը։ Հիմք չը կայ Անգլիայի գործունէութիւնը այլ չափով չափել, Ռուսաստանինը՝ այլ։ Հակառակ դէպքում, յայտնեց իշխ. Դօլգորուկօվը, ինքը կը բողոքէ։ Սպառնալիքը ունեցաւ իր ազդեցութիւնը։ Կօնգրէսը միաձայն համակրանք յայտնելով եգիպտացիներին՝ որոշեց, որ մօտ ապագայում պիտի քննութեան առնի եգիպտական հարցը։ (К.)

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԲՐԻՒՍՍԷԼԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍՈՒՄ

Շուէդացի գրող Տօրվալդ Պետերսէնը Մալմէում լոյս տեսնող «Sydsvenska Degbladst» շուէդական լրագրին բրիւսէլեան ցուցահանդէսից ուղարկած իր թղթակցութեան մէջ՝ անաչառաբար արտայայտվելով գերմանական բաժնի և Գերմանիայի կատարած տնտեսական առաջադիմութիւնների մասին՝ ասում է.

«Վերջին տարիներս արդիւնաբերութեան մէջ Գերմանիայի կատարած առաջադիմութիւնները ստիպել է Ջօն-Բուլին մտածել խոր կերպով։ Գերմանիան կանգնած է այժմ Անգլիային հաւասարող աստիճանի վրա, և նոյն իսկ սպառնում է նրանից էլ առաջ անցնել։

«Համաշխարհային ցուցահանդէսը Բրիւսէլում՝ երկու ազգերին էլ յարմար ժամանակ տուեց, ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ, չափվել իրանց ոյժերով։ Այդպէս էլ եղաւ։

«Հետևանքները ցոյց տուին Գերմանիայի միանգամայն ակնյայտնի յաղթանակը։

«Բրիւսէլեան ցուցահանդէսի գերմանական բաժինը իրօք շնորհալի է։ Ի հարկէ ցուցահանդիսում ի ցոյց էր դրված գերմանական արդիւնաբերութեան զանազան ճիւղերի արտադրութիւններից ամենալաւ տիպիկները, և գերմանական բաժնի կօմիտէտը փայլուն կերպով կատարելով իր առաջադրված պարտականութիւնը՝ տարաւ իսկական յաղթանակ։ Բաժնի հանդիսաւոր բացմանը ներկայ եղողները, որոնց թւի մէջ կային բաւականին գերմանացիներ և ֆրանսիացիներ, միանգամայն հիացել էին Գերմանիայի կատարած առաջադիմութիւններից։ Ալբերտ թագաւորը, տեսնելով գերմանական բաժինը, ասաց. «Սա Գերմանիայի հզօրութիւնն է, որը այստեղ բացարձակ ի ցոյց է դրված բոլորին»։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սարատովի մօտ տեղի է ունեցել մի արիւնոտ դրամա։ Կալուածատէր Ագրինսկիի 40 տարեկան կինը կրքոտ կերպով սիրելով հովիւ Տուրուտանովին՝ լիովին ենթարկվում էր նրա կամքին։ Հովիւը խանդոտութիւնից սպանեց Ագրինսկիին անտառում, որից յետոյ սիրահարները 10 օր թաքնված մնացին անտառում, կերակրվելով արմտիքներով։ Վերջապէս քաղցը ստիպեց նրանց Սարատով գնալ, և այնտեղ ձերբակալեցին նրանց։ Ձերբակալման ժամանակ Ագրինսկիի կինը ընկաւ հովւի վրա կոչելով. «Ներիր, սիրելիս», և հանգիստ սրտով խոստովանեց իր յանցանքը։ («К.»)

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ մարդատար № 12 գնացքը՝ 2 ժ. 38 ր. ցերեկ., Գանձակ է հասնում 9 ժ. 9 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 20 ր գիշերվայ, Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 16 ր. գիշ., Բալաջարի 8 ժ. 1 ր. առաւ., Բագու՝ 8 ժ. 48 ր. առաւ.։ Արագ № 2 գնացքը՝ 8 ժ. 15 ր. առաւ. Գանձակ է հասնում 1 ժ. 28 ր. ցեր., Եւլախ՝ 3 ժ. 6 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 7 ժ. 15 ր. երեկ., Բալաջարի՝ 10 ժ. 8 ր. գիշ., Բագու՝ 10 ժ. 53 ր. գիշ.։ Պոստատար № 4 գնացքը՝ 10 ժ. 4 ր. գիշ., Գանձակ է հասնում 4 ժ. 18 ր. գիշ., Եւլախ՝ 6 ժ. 26 ր. առաւ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 23 ր. առաւ., Բալաջարի՝ 3 ժ. 9 ր. ցեր., Բագու՝ 4 ժ. 45 ր. ցեր.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ պոստատար № $^{74}/_{75}$ 12 ժ. 22 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ է հասնում 11 ժ. 21 ր. առ., Էջմիածին կայար.՝ 4 ժ. 49 ր. ցեր., Նախիջևան՝ 10 ժ. 51 ր. գիշ.. Ջուլֆա՝ 12 ժ. 29 ր. գիշ.։ Ապրանքատար-մարդատար՝ 4 ժ. 15 ր. ցեր., Ալէքսանդրօպօլ է հասնում 3 ժ. 10 ր. գիշ., Էջմիածին՝ 8 ժ. 38 ր. առաւօտեան, Երևան՝ 10 ժ. 9 ր. առ., և սրանից զէնք այլևս չէ գնում։

ԲԱԹՈՒՄ՝ մարդատար № 5՝ 7 ժ. 31 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 11 ժ. 45 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 30 ր. առաւ.։ Պոստատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 5 ժ. 47 ր. երեկ., Բաթում՝ 3 ժ. 25 ր. գիշ.։ Արագ № գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 39 ր. գիշ., Բաթում՝ 10 ժ. 49 ր. առաւօտեան։

ԲՈՐԺՈՄ՝ մարդատար № $^7/_8$ 8 ժ. 28 ր. առ. Միխայլօվօ է հասնում 12 ժ. 42 ր. ցեր., Բօրժօմ՝ 2 ժ. 3 ր. ցեր.։ Մարդատար № $^9/_{10}$ 3 ժ. 36 ր. ցեր., Միխայլօվօ է հասնում 7 ժ. 56 ր. երեկ., Բօրժօմ՝ 9 ժ. 13 ր. գիշերվայ.

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ պոստատար № 3՝ 12 ժ. 24 ր. ցեր.։ Արագ № 1 գնացքը՝ 10 ժ. 36 ր. գիշ.։ Մարդատար № 11՝ 6 ժ. 58 ր. առ. (այս գնացքը Բաթում չէ գնում)։

ԲԱԹՈՒՄԻՑ՝ արագ № 2 գնացքը՝ 7 ժ. 25 ր. առաւ.։ Պոստատար № 4՝ 9 ժ. 4 ր. երեկ.։ Մարդատար № 6՝ 11 ժ. 4 ր. առ. (այս գնացքը Բագու չէ գնում)։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ պոստատար № $^{72}/_{73}$՝ 6 ժ. 8 ր. առաւ.։ Մարդատար-ապրանքատար՝ 6 ժ. 33 ր. երեկոյեան։

ԲՈՐԺՈՄԻՑ՝ մարդատար № $^9/_{10}$ 8 ժ. 8 ր. երեկ.։ Մարդատար № $^7/_8$ 6 ժ. 28 ր. առաւ.

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆԸ
ՎԵՐԱԴԱՐՁԱՒ
909. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԻԷՎԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Ընդունելութիւնը ամեն օր
Առաւօտեան ժամը 10—1
Երեկոյեան ժամը 5—7
Վելյամինօվսկայա փող. № 8
(կ. հ.) 564. 100—33

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՄ Արօրի դասագրքեր ցանկացողները կարող են դիմել բոլոր հայ գրավաճառներին և ինձ (Бебутовская ул. 20)։ Զգոյշ՝ ինչպէս յայտարարված է գրքերի կազմի վրա։
ՍԱՀԱԿ ա.-քահ. ՍԱՀԱԿԵԱՆՑ
(ե. ու.) 903. 10—1

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԱՐՇ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆԻ
ԽԱՒԱՐ ԱՇԽԱՐՀՈՒՄ
պատմուածքներ գիւղական կեանքից
307 եր., գինն է 1 րուբլի

Այս պատմուածքներից մի քանիսը, օրինակ՝ «Վարսի յաճախորդները», «Կարմիր ճիպոտը», «Սէրօրենց ածերը» և այլն, տպագրված են եղել «Մուրճում» 1901—1902 թ. թ., իսկ միւսները հեղինակի անտիպ աշխատութիւններից են։
Գումարով գնողներին 20% զեղչ։
Դիմել հեղինակին՝ Батумъ, Государствен. Банкъ. Инспектору мелкаго кредита, А. Шахназаряну.
(չ. ու.) 896. 5—2

2 ՋԳԵՍՏԱՑՈՒ 4 ՌՈՒԲԼՈՎ
Տղամարդկանց հագուստեղէնի շրջանում նորութիւն է «Ճէյիօտ Տուրինը»։ Այնպիսի էժան գնով ինչպէս 2 րուբ., $4^1/_4$ արշ. կտոր, տղամ. ամբողջ զգեստացու, ոչնչով չէ տարբերվում արշ. 2—3 րուբ. արժեցող կտորից և ունի վերջինիս բոլոր յատկութիւնները, այն է՝ բարձր տեսք. ամրութիւն, գործնականութիւն և էլեգանտութիւն։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Այդպիսի 2 կտոր ուղարկվում է 4 րուբլով, ճանապարհածախսը՝ 70 կ., պոստով, վերադիր վճ., առանց կանխավճ.։ Չորս և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախսը փաբրիկայի հաշւին։ Առանց ռիսկի, լրիւ երաշխաւոր., եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում։ Պահանջները հասցէագրել. въ фабрику шерстяныхъ издѣлiй Т-ВА «ЭХО», г. Лодзь, № 70.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ա. օ.) (B. 50359) 872. 17—4

Տպագրվում է և մինչև օգոստոսի 20-ը լոյս կը տեսնի
Մ. ՏԱՐԱՃՉԵԱՆԻ
◇→ ՁԵՌՆԱՐԿ ←◇
ԹԵԼԱԳՐՈՒԹԵԱՆ
(Ուղղագրական վարժութիւններ)
Գինը 5 կոպ.
(օ. մ.) 906. 2—1

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՊԼՈՄՈՎ
Մի փորձառու ուսուցիչ
կամենում է տեղ ստանալ հայոց միջնակարգ դպրոցներում, գիրադասելով մաթեմատիկական առարկաները, ընդհանուր պատմութիւնը, գրականութիւնը և գերմաներէն լեզուն։
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ".
(օ. մ.) 912. 5—1

Ուղարկում եմ պոստով, վերադիր վճ. և առանց կանխավճարի «Տրիումֆ» չմաշուող մի ամբողջ կտոր $4^1/_4$ արշ., տղամարդկանց
ՋԳԵՍՏԻ ՀԱՄԱՐ 2 Ր. 75 Կ.
Չը նայած որ շատ էժան է, «ՏՐԻՈՒՄՖ» կտորը բրդից է (ոչ բամբակից) և ունի բոլոր լաւ կտորների յատկութիւնը միանգամայն ամուր է, գործնական և չքեղ։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ճանապարհածախսը 55 կ.։ Նոյնպէս ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործնական և գեղեցիկ ՓԻՋԱԿ 2 րուբլով տարվայ ամեն սէզոնին մաշելի։ Ճանապ. 55 կ.։ 2 րուբլով ՇԱԼՎԱՐ ուղարկում եմ պատրաստ, ամուր և գործնական կտորից կարված։ Ճանապարհածախսը 35 կ.։ Երեք և աւելի կտոր բերել տալուց՝ ճանապարհածախսը իմ հաշւին։ Պահանջները հասցէագրել. г. Лодзь, № 70, фабрика ЗИГМУНТА РОЗЕНТАЛ Я.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ա. օ.) (B. 50155) 870. 17—4

Երևանի ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ բարձր դասարանների համար հարկաւոր է
Մի խմբապետ-դաստիարակ
ՌՈՒՍՈՒՑԻՉ
ռուսաց լեզուի, ռուսաց գրականութեան և ռուսաց պատմութեան համար շաբաթական 24 դասով և 70 ր. դասավճարով։ Ցանկացողները իրանց խնդրագրերի հետ պէտք է ներկայացնեն ուսման իսկական վկայականները կամ նրանց վաւերացված պատճէնները։ Խնդրագրերը պէտք է ուղարկել մինչև օգոստոսի 20-ը Երևան՝ Հոգաբարձութեան հասցէով։
(ա. ․) 899. 10—3

2 ՋԳԵՍՏ 5 Ր. 25 Կ.
Տարածելու նպատակով մենք ուղարկում ենք 12 ր. փոխարէն 5 ր. 25 կոպէկով հետևեալ զգեստացու 2 կտորները. 1) $4^1/_4$ արշ. ֆրանս տրիկո-տրամ. զգեստի համար, շատ ամուր, գործնական և մոդային նկարներով բրդէ կտոր։ 2) 8 արշ. կտոր «Անգլէ», կանանց ամբողջ զգեստի համար, միանգամայն մոդային և գեղեցիկ բրդէ կտոր։ Այդպիսի 2 կտոր լաւ տեսակից ուղարկում ենք 5 ր. 75 կ.-ով։ Ճանապարհածախսը 55 կ.։ Երկու և աւելի զոյգ կտոր բերել տալուց ճանապարհածախսը մեր հաշւին։ Ուղարկում ենք պոստով, վե ադիր վճ., առանց կանխավճ. և երաշխաւոր., եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում։ Պահանջները հասցէագրել. г. Лодзь, № 70, въ фабрику ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ա. օ.) (B. 50257) 871. 17—4

ԱՐԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱԲ. ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
Տ. Մ. ՓԻԼՕՑԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/4.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտր. կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
ԴՈՐԾՆԱԿԱՆ պրակտիկ պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster-Comtori-ում։ Նիւթերն անվում են բէլլ կեանքից։ Առարկաներն են. ա) ՊԱՐՏԱԴԻՐ.—1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական), 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենալաւ ձեռքի ուղղումն). բ) ՈՉ-ՊԱՐՏԱԴԻՐ.—1) ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ, 2) ապրանքագիտութիւն, 3) գակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և ուր.) և 4) առևտրական թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և պատ-պատ։ Ունկնդիրների թիւ չառաւելեան պատճառով բացվում է զուգընթաց բաժանմունք։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, առ. 10—2 ժ. և երեկ. 4—7 ժ.։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՑԵԱՆ
(ու. կ. հ.) 907. 0—1

ՄԱՄՈՒԼԻ ԲԻՒՐՕ
(ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱՁԻՆ կից)
ՄԵԿ ՄԻԼԻՈՆ 700 ՀԱԶԱՐ
քառ. սանտ. ընտիր ԿԼԻՇԷ փայտի, պղնձի, պղ ձի և ցինկի վրա տրվում են վարձու պարբերական հանդէսների, դասագրքերի, պլակատների, ալբոմների, օրացոյցների համար։ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ամեն տեսակ կլիշէների պատուէրներ, որ պատրաստվում են Եւրոպայի հռչակաւոր աւրանոցներում։ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ տպագրական գործի հետ առնչութիւն ունեցող ամեն տեսակ պատուէրներ։ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ ԵՆ ցանկացողների համար օրացոյցներ, գրքեր, ալբոմներ, բրօշիւրներ, պլէտներ և այլն և այլն։
Դիմել Тифлисъ, Бюро Печати. Маштоцкая № 5.
(չ. ու.) 810. 0—9

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կը տեսնի
ԱՐՍԷՆ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ
◆◆◆◆ ՇԻՐՎԱՆԶԱԴԷ ◆◆◆◆
Հայ ընտանիքի և ընտելիգենտի վիպասանը։
(Առաջիկայ յօբելեանի առիթով)
Հրատարակութիւն «ԳԵՂԱՐՈՒԵՍՏ» հանդէսի։
(օ.մ.) 898. 3—2

Լոյս են տեսել և վաճառվում են
ՆԻԿ. ՍԱՐԳՍԵԱՆԻ
կենսաբանական ուղղութեամբ կազմված
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ
ՄԱՐԴ և ԿԵՆԴԱՆԻ (տարրական մարդակազմ. և կենդանաբանութիւն) 204 երես, 70 կոպ.
ԲՈՅՍ (տարրական բուսաբանութիւն) 128 երես 50 կոպ.
Դիմել Թիֆլիս, «Գուտտենբերգ», «Կենտրոնական», «Գիր» և «Փարոս» գրավաճառանոցները կամ կազմողին հետևեալ հասցէով՝ Кочубеевскій переулокъ, 13.
Վաճառվում են նաև
Վիլհէլմ Բեօլշէ.—«ՄԱՐԴՈՒ ԾԱԳՈՒՄԸ», գերմ. թարգմ. Նիկ. Սարգսեան, գինը 40 կոպ.
Նիկ. Սարգսեան.—«ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԳՈՅՆԵՐԸ» գինը 15 կոպ.
(օ. մ.) 889. 10—3

Типографія „Экономія" Большая Ванкская № 3.